24. Ընթացիկ և հանրագումարային ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, ստուգումների ձևերը, հարցաշարերը, թեսթային կամ այլ առաջադրանքները և ստուգումների անցկացման ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշներն ուսանողներին տրամադրվում են նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում): Գրավոր ստուգման տարբերակում յուրաքանչյուր հարցի համար պետք է նշվի գնահատման առավելագույն միավորը, իսկ առաջադրանքի ծավալը համապատասխանի հատկացվող ժամանակահատվածին (ընթացիկ քննության համար՝ առնվազն 120 րոպե): Ընթացիկ քննության հարցատոմսը պետք է պարունակի առնվազն 8-միավորանոց թեստային առաջադրանք:

25. Ընթացիկ քննությունների ու ստուգումների, ստուգարքների ու քննությունների ժամանակացույցերը կազմվում են ֆակուլտետներում, ներկայացվում ուսումնական վարչություն և հաստատվում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

26. Արգելվում է առանց ռեկտորատի թույլտվության և ուսանողների համաձայնության քննության վաղաժամկետ ընդունումը կամ հետաձգումը:

27. Ընթացիկ քննություններն անցկացվում են ըստ հաստատված ժամանակացույցի:

28. Ընթացիկ քննության օրերին ուսանողներն ազատվում են այդ օրվա դասերից:

29. Ստուգարքով ավարտվող առարկայի ընթացիկ ստուգումներն անցկացվում են ստուգումների թվով համամասնորեն բաժանված ժամանակահատվածներում: Ընթացիկ ստուգումն անցկացվում է տվյալ առարկան դասավանդող դասախոսի կողմից՝ դասացուցակով առարկային հատկացված ժամերին (ուսանողը դասերից չի ազատվում):

30. Ընթացիկ քննության կամ ստուգման քննարկումն անցկացվում է դասերից հետո՝ անհատական աշխատանքների համար նախատեսված ժամերի շրջանակում՝ առարկան դասավանդող դասախոսի կամ ամբիոնի որոշմամբ՝ նույն առարկան դասավանդող այլ դասախոսի կողմից՝ ստուգմանը հաջորդող աշխատանքային երկու օրվա ընթացքում:

31. Գրավոր ստուգման արդյունքները վերջնական ամփոփումից հետո գրանցվում են համապատասխան տեղեկագրում (արդյունքները փակցվում են ի տես բոլորի):

32. Հետագա մեկ օրվա ընթացքում ուսանողն իրավունք ունի որոշակի հարց(եր)ի գնահատումը բողոքարկելու նպատակով գրավոր դիմելու դեկանին, որը համապատասխան ամբիոնի վարիչի հետ կազմակերպում է բողոքի քննարկումը երեք աշխատանքային օրվա ընթացքում:

33. Քննարկման արդյունքի մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է տեղեկագրին:

34. Ընթացիկ կամ հանրագումարային ստուգմանը (ստուգարքին, քննությանը) դասախոսի բացակայության դեպքում ստուգումն իրականացվում է դեկանի գրավոր կարգադրությամբ՝ ըստ ամբիոնի վարիչի առաջարկի (այլ դասախոսի կամ հանձնաժողով):

35. Ընթացիկ ստուգումից բացակայության դեպքում լրացուցիչ ստուգում չի կազմակերպվում և տեղեկագրում գրանցվում է «չներկայացած: Ուսանողը այն վերահանձնում է ստուգարքների համար նախատեսված շաբաթվա ընթացքում:

V. Ստուգարքների ամփոփումը

36. Ստուգարքներն ամփոփվում են յուրաքանչյուր «կիսամյակի ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում:

37. Ուսումնական պարապմունքների նախավերջին շաբաթվա ընթացքում իրականացվում է բաց թողնված դասերի լրացում: Նախավերջին շաբաթում, ըստ հաստատված ժամանակացույցի, լրացվում են բաց թողած լաբորատոր, գործնական սեմինար պարապմունքները :

38. Եթե ուսանողը հանձնել է բոլոր ընթացիկ ստուգումները և ունի 58 կամ ավելի միավոր, ապա տվյալ առարկայի ստուգարքը համարվում է հանձնված:

39. 0-57 միավորների դեպքում ուսանողը գնահատվում է «Չստուգված»:

VI. Քննությունների անցկացումը

40. Քննություններն անցկացվում են կիսամյակային քննաշրջան-ներում՝ 19-20-րդ շաբաթներում՝ ըստ հաստատված ժամանակացույցի:

41. Քննությունների անցկացման ժամանակացույցը՝ ուսանողական խմբերի առաջադրմամբ, կազմվում է դեկանատներում, ներկայացվում ուսումնական վարչություն և հաստատվում ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից քննաշրջանը սկսվելուց մեկ ամիս առաջ:

42. Քննություններն անցկացվում են հարցատոմսերով, թեստերով, որոնք հաստատվում են ամբիոնի նիստում քննաշրջանից մեկ ամիս առաջ:

43. Քննությունները կարող են կազմակերպվել համակարգչային տեխնիկայի միջոցով:

44. Քննության ընթացքում տվյալ դասընթացից խնդիրներ կան այլ գործնական առաջադրանքներ տալու դեպքում դասախոսը պարտավոր է ուսանողներին ապահովել խնդրագրքերով, առաջադրանքների կատարման համար անհրաժեշտ մեթոդական և տեղեկատու ձեռնարկներով:

45. Կրթական յուրաքանչյուր մոդուլ գնահատվում է առանձին, և հարցատոմսերն ընդգրկում են միայն տվյալ կիսամյակում դասավանդված թեմաները:

46. Բանավոր քննության ընթացքում ստացած գնահատականին ուսանողի անհամաձայնության դեպքում ուսանողը քննասենյակում հայտարարում է, որ համաձայն չէ իր գնահատականին և անմիջապես այդ մասին գրավոր դիմում է դեկանին, որն էլ համապատասխան ամբիոնի վարիչի (անհրաժեշտության դեպքում նաև քննությունները վերահսկող հանձնաժողովի ներկայացուցչի) հետ կազմակերպում է քննության քննարկումը, որի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն՝ գնահատականը փոփոխելու կամ նույնը թողնելու վերաբերյալ:

47. Տվյալ առարկայից դրական գնահատական (58 և ավելի միավորներ) ունեցող ուսանողը կարող է չմասնակցել այդ առարկայի քննությանը՝ պահպանելով իր գնահատականը կամ մասնակցելով քննությանը՝ բարձրացնել դրական գնահատականը, որը ենթակա չէ իջեցման:

48. Քննության (ստուգարքի) վերջում քննվող երեք ուսանողները քննասենյակից դուրս են գալիս վերջին ուսանողի պատասխանից հետո:

49. Ուսումնական վարչության և դեկանի կողմից հաստատված տեղեկագիրը դեկանը տրամադրում է դասախոսին ստուգման օրը: Տեղեկագրի մեջ դեկանի կողմից կարող են կատարվել հետևյալ գրառումները.

50. «Քննության չի թույլատրված» (թանաքով), այն ուսանողների անվան դիմաց, որոնք քննաշրջանին կան տվյալ առարկայի քննությանը (ստուգարքին) մասնակցելու թույլտվություն չունեն,

51. բազմագործոնային համակարգով դրական գնահատված քննության (կամ ստուգարքի) գնահատականի միջը և «Փոխանցվում է» գրառումը (թանաքով), եթե ուսանողը տվյալ կրթական մոդուլից ունի դրական գնահատական (այլ բուհից

տեղափոխություն, ուսանողական իրավունքի վերականգնում և այլն) և չի ցանկանում մասնակցել այդ քննությանը (ստուգարքին), ինչի մասին նա նախօրոք գրավոր տեղեկացնում է դեկանին:

52. Քննության ներկայանալիս ուսանողը պարտավոր է դասախոսին ներկայացնել ստուգման գրքույկը: Դասախոսը քննական տեղեկագրում գրանցում է ուսանողի ստուգման գրքույկի համարը, հարցատոմսի համարը, ուսանողի պատասխանից հետո՝ բարձրաձայն հայտնում գնահատականը, որից հետո գրանցում է տեղեկագրում, դրական գնահատականը նաև ստուգման գրքույկում: Կարգի խախտման դեպքում դասախոսը ենթակա է նկատողության:

53. Ամփոփված քննական տեղեկագիրը դեկանատ է ներկայացվում քննության ավարտից անմիջապես հետո:

54. Բանավոր քննությունը կազմակերպվում է մեկ օրվա ընթացքում մեկ ենթախմբի համար:

VII. Գնահատման սանդղակը և նշագրումը

55. ՎՊՅ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է հավելված 2-ում:

56. Այն դասընթացներին, որոնցից ուսանողը վաստակել է 58-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է «չստուգված», կրեդիտներ չեն հատկացվում և ստուգարքային գրքույկում նշում չի կատարվում:

57. Գնահատումը կատարվում է ըստ տվյալ դասընթացի գնահատման սահմանված չափանիշների.

18-20 միավորները համարվում են դրական գնահատական

7 միավորները համարվում են բացասական (չի նշվում ուսանողի ստուգման գրքույկում):

58. Քննության ժամանակ կամ գրավոր աշխատանքի կատարման ընթացքում ուսանողի անազնվությունը հայտնաբերելիս (ծածկաթերթիկից կամ այլ արգելված

աղբյուրից օգտվելու դեպքում) (տե՛ս «Ակադեմիական ազնվության կարգեր» այդ ուսանողի քննությունը (գրավոր աշխատանքը) դադարեցվում է և տեղեկագրում գրանցվում է 0 (զրո):

VIII. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

59. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար դեկանատը յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած հանրագումարային գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը (հավելված 3):

60. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

61. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

ծրագրային (գումարային) կրեդիտների (ԾԿ) քանակը

գնահատված կրեդիտների (ԳԿ) քանակը

վարկանիշային միավորները (ՎՄ)

միջին որակական գնահատականը (ՄՈԳ):

62. Ծրագրային (գումարային) կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած բոլոր կրեդիտների գումարն է:

63. Գնահատված կրեդիտը (ԳԿ) այն դասընթացների կրեդիտների գումարն է, որոնք գնահատված են.

$$\text{ԳԿ} = \sum (\text{Կրեդիտ})$$

64. Վարկանիշային միավորը (ՎՄ) բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող ECTS գնահատականների արտադրյալների գումարն է.

$$\text{ՎՄ} = \sum (\text{Կրեդիտ} \times \text{ԹԳ}),$$

որտեղ ԹԳ-ն տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար ECTS թվային գնահատականն է: Օրինակ, եթե 5 կրեդիտով դասընթացը գնահատվել է 72 միավոր, ապա տվյալ դասընթացից վարկանիշային միավորը հավասար է $5 \text{ կրեդիտ} \times 72 = 360$ 500 հնարավորից:

Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով չափված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 0,01 ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \text{ՎՄ} / (\sum \text{ԳԿ})$$

65. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված տվյալ կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

66. Ուսանողի հիմնավորված պահանջի դեպքում բուհը պարտավոր է, համաձայն բուհում գործող կարգի, տրամադրել նրա ակադեմիական տեղեկագիրը ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար:

67. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր դասընթացների անհրաժեշտ կրեդիտները (30 կրեդիտ՝ մեկ կիսամյակի համար):

68. 30 կրեդիտ չհավաքած ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և ձեռք բերելու սահմանված կրեդիտները գործող կարգի համաձայն:

X. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

69. Դրական գնահատված դասընթացի քննության(ստուգման) կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

70. Ստուգմանը, ստուգարքին կամ քննությանը չներկայանալը համարվում է հարգելի՝ քննության օրը և դրան հաջորդող երկու աշխատանքային օրերի ընթացքում Համալսարանի ընդհանուր բաժնում գրանցված բժշկական տեղեկանքի կամ բացակայությունը հիմնավորող այլ փաստաթղթի առկայության դեպքում:

71. Սահմանված ժամկետներում ընթացիկ ստուգումներն ու քննությունն անհարգելի պատճառով չհանձնած կամ արդյունարար նվազագույն 58 միավորը չհավաքած (գտնվում է 0-57 միջակայքում) ուսանողներն իրավունք ունեն դրանք լրացնելու և հանձնելու համաձայն գործող կարգի, ընդ որում՝ այս շրջանում ստացած դրական գնահատականներով ուսանողը չի կարող մասնակցել նպաստների և ուսանողական կրթաթոշակի հատկացման համար անցկացվող մրցույթին:

72. Յուրաքանչյուր առարկայի քննության կամ ստուգարքի ակադեմիական պարտքը թույլատրվում է վերահանձնել միայն երկու անգամ: Պարտքերի մարման համար սահմանվում է երկու շրջան՝ ըստ ժամանակացույցի:

73. Պրակտիկային մասնակցած, բայց չորակավորված ուսանողների համար դեկանը պրակտիկայի պարտքերի մարման համար հաստատում է ժամանակացույց:

74. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ կամ այլ պատճառներով պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

XI. Քննաշրջանի արդյունքների ամփոփումը

75. Քննաշրջանի արդյունքների ամփոփումը կատարվում է դեկանատներում և ուսումնական վարչությունում:

76. Այն ուսանողները, որոնք հաջողությամբ կատարել են ուսումնական տարվա պլանով նախատեսված բոլոր առաջադրանքները, դեկանի ներկայացմամբ և ռեկտորի հրամանով փոխադրվում են հաջորդ կուրս:

77. Կիսամյակում գերազանցիկ է համարվում այն ուսանողը, որը տվյալ կիսամյակում ստուգարքային և քննական առարկաներից, կուրսային աշխատանքներից (նախագծերից), պրակտիկաներից հավաքել է 86-100 միավորներ («գերազանց» գնահատականներ) :

78. Քննաշրջանի արդյունքները ուսումնասիրվում և քննարկվում են ամբիոնների, ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի, ռեկտորատի և Համալսարանի գիտխորհրդի նիստերում:

XIII. Կրեդիտների փոխանցումը

79. Ակադեմիական կրեդիտների կուտակումը և փոխանցումը կատարվում է համաձայն ,Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգի:

XIV. Քննությունների և ստուգարքների անցկացման հսկողությունը

80. Քննությունների և ստուգարքների անցկացման նկատմամբ հսկողությունն իրականացվում է ամբիոնի վարիչի, դեկանատի, ուսումնական վարչության և քննությունները վերահսկող հանձնաժողովի կողմից:

81. Քննությունները վերահսկող հանձնաժողովը ստեղծվում է ռեկտորի հրամանով և հաշվետու է ռեկտորին ու ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

82. Քննությունները վերահսկող հանձնաժողովը իրավասու է դեկանի գիտությամբ ստուգելու ֆակուլտետում անցկացվող բոլոր տեսակի քննություններն ու ստուգարքները, նրանց համապատասխանությունը սույն կանոնակարգին և լսելու ուսանող(ների) պատասխան(ներ)ը:

83. Քննության կամ ստուգարքի ընթացքի, դասախոսի կամ ուսանողի պարտականությունների կամ իրավունքների որևէ խախտում նկատելու դեպքում հանձնաժողովի անդամներն իրավասու են միջամտելու և (դեկանի օգնությամբ) կանխելու նկատված խախտումը:

84. Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի անդամներն իրավասու են, անմիջապես գրավոր տեղյակ պահելով բուհի ռեկտորին կամ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին, դեկանից պահանջելու քննության կամ ստուգարքի դադարեցում: Քննության (ստուգարքի) շարունակման կամ դադարեցման և նոր քննության (ստուգարքի) անցկացման մասին որոշումը կայացվում է Համալսարանի ղեկավարության և դեկանի կողմից:

Հավելված 1

Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության համար հատկացվող միավորները և համարժեք տոկոսները

Մասնակցության աստիճանը մասնակցության աստիճանը %	Հատկացվող միավորը	
	Դասախոսություն	Գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանք
96-100	5	15
91-95	5	15
86-90	4	14
81-85	4	14
76-80	3	13
71-75	3	13
66-70	2	12
61-65	2	12
56-60	1	11
51-55	1	11
0-50	0	0

Ուսումնառության արդյունքների գնահատման 100 -միավորանոց սանդղակ

Գնահատականը ըստ 5-բալանոց համակարգի	Գնահատականը ըստ 100-բալանոց համակարգի	Գնահատականը ըստ ECTS համակարգի
գերազանց (5)	96-100	A ⁺
գերազանց (5)	91-95	A
գերազանց (5)	86-90	A ⁻
լավ (4)	81-85	B ⁺
լավ (4)	76-80	B
լավ (4)	71-75	B ⁻
բավարար (3)	67-70	C ⁺
բավարար (3)	62-66	C
բավարար (3)	58-61	C ⁻
անբավարար	0-57	D
ստուգված	58-100	S
չստուգված	0-57	U

Գ. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:

2. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն կցված ուսանողների ուսումնական առաջընթացը նրանց ուսումնառության ողջ ընթացքում:

3. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ:

Դ. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,

- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,

- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին,

2. Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ՎՊՄԻ կողմից առաջադրվող կամ ընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,

- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),

- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,

- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,

- բակալավրի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթերի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ Կառավարության համապատասխան որոշման:

Մաս II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1.Տեղեկագրի նպատակը

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է մանկավարժության ֆակուլտետում իրականացվող բակալավրի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես առանձին մասնագիտությունների ուսումնական ծրագրերի, այպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված ելքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

**030300.62 «ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐՔ**

**1.1. Ընդհանուր հունանիտար և սոցիալ-տնտեսագիտական
կրթամաս**

ՅԼ/Բ-1007 Յայոց լեզու (2 կրեդիտ)

**Շաբաթական 2 ժամ (8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական
պարապմունք)**

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է հայեցի դաստիարակության խնդիրների լուծումը, ինչպես նաև ապագա մասնագետի գրավոր և բանավոր կիրք խոսք մշակելու, ապագա ուսուցչի, գիտնական-հետազոտողի մոտ գործնական, գիտական ոճերին ծանոթացմամբ և կիրառական հմտությունների ձեռք բերման անհրաժեշտությամբ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է իմանա.

- ժամանակակից հայերենի կառուցվածքային օրինաչափությունները, քերականական կանոնները, համակարգերի և ենթահամակարգերի հարաբերակցությունը:
- Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա.
- Գործնականում կիրառել ժամանակակից հայերենի կառուցվածքային օրինաչափությունները, քերականական կանոնները:
- Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է տիրապետի.
- ՀՀ պետական լեզվի գործառույթների, կիրառական առանձնահատկությունների նորմերին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայերենը որպես հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզու: **Թեմա 2.** Արևելահայերեն, արևմտահայերեն, բարբառներ. ընդհանուր գաղափար: **Թեմա 3.** Հայերենագիտություն և հայագիտություն: Հայագիտական կենտրոններ: **Թեմա 4.** Հայերենի հնչյունական համակարգը. ձայնավորներ և երկհնչյուններ, դրանց ուղղագրությունը և ուղղախոսությունը: **Թեմա 5.** Հայերենի հնչյունական

համակարգը. բաղաձայններ, դրանց ուղղագրությունը և ուղղախոսությունը: **Թեմա 6.** Բառագիտություն. բառապաշար և բառակազմություն: Բասռապաշարի հարստացում. ստուգաբանական և բառակազմական վերլուծությունն իբրև բառապաշարի հարստացման միջոց: **Թեմա 7.** Գործնական գրություններ: **Թեմա 8.** Մասնագիտական տերմինաբանություն: **Թեմա 9.** Խոսքի մասեր: Հայերենի ձևաբանական նորմայի առանձնահատկությունները: Բառապաշարի հարստացումը ձևաբանությունն ուսումնասիրելիս: **Թեմա 10.** Շարահյուսական կապակցման եղանակներ և միջոցներ: Բառակապակցություն և նախադասություն: Կիրառական հմտություններ: Կապակցված խոսքի մշակումը և կատարելագործումը նախադասության ուսուցանման միջոցով: **Թեմա 11.** Կետադրություն: Կիրառական հմտություններ: **Թեմա 12.** Ամփոփում: Հայերեն բանավոր և գրավոր խոսքի առանձնահատկությունները, տարածված սխալների բնույթը, դրանց վերացմանն ուղղված գործնական աշխատանք գրավոր տեքստի և նրա բանավոր վերարտադրման հմտությունների ամրապնդման նպատակով:

Գ/բ -0241Գրականություն –2 կրեդիտ

Դասախոսություն –8 ժամ, գործնական - 24 ժամ, (շաբաթական 2 ժամ) 2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողներին զինել հայ գրականության պատմությանը վերաբերող գիտելիքներով՝ շեշտը դնելով գրապատմական շրջափուլերի առանցքային հեղինակների և գործերի վրա: Սովորեցնել բնագրի վերլուծություն կատարել, մասնակցել քննարկում-բանավեճերի, անգիր հատվածներ հանձնարարել չափածո գրական գործերից: Գրականության զարգացման պատմության մասին ընդհանուր պատկերացում ձևավորել՝ առնչակից տեսական հարցերի պարզաբանումներն ամուր հիմքերի վրա դնելով, ինչպես որոշ գրական ուղղություններ և մեթոդներ, գրական ժանրեր, պատկերավորման միջոցներ, կրկնության շարահյուսական ֆիգուրներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- Պետք է կարողանա գրական վերլուծության ենթարկել անհրաժեշտ գեղարվեստական երկերը,
- Պետք է կարողանա անգիր հատվածներ ասել պոեզիայից,
- Պետք է կարողանա զանազանել գրական մեթոդների և ուղղությունների տարբերակիչ սկզբունքները, ժանրային կառուցվածքները,
- Պետք է կարողանա գրական գործընթացի վերաբերյալ ընդհանուր կարծիք հայտնել:
- Պետք է տիրապետի գրական-գեղարվեստական գործերի վերլուծության սկզբունքներին ու մեթոդներին, քննարման մասնակցելու կանոններին:

Բովանդակությունը

Թեմա 1. Բանահյուսության գեղարվեստա-ճանաչողական գործառույթը: Գրերի գյուտի պատմամշակութային արժեքը, 5-րդ դարի հայ գրականության ընդհանուր նկարագիր:**Թեմա 2** «Սասնա ծռեր» էպոսը: **Թեմա 3.**Գրիգոր Նարեկացի, «Մատյան ողբերգության», Ֆրիկ, քնարերգությունը: **Թեմա 4.** Միջնադարյան տաղերգություն, հայրեններ: **Թեմա 5.** Աբովյանը և լուսավորական շարժումը: **Թեմա 6** Հ. Պարոնյանի ստեղծագործությունը: Երգիծանքը: **Թեմա 7** Ռոմանտիզմը որպես գրական մեթոդ: Րաֆֆու «Սամվել» վեպը:**Թեմա 8** Գր. Զոհրապը և հայ նորավիպագրությունը: **Թեմա 9.** Շիրվանզադեն և հայ դասական ռեալիզմը: **Թեմա 10.** Հ. Թումանյան: **Թեմա 11.** Ավ . Իսահակյան: **Թեմա 12** Վ. Տերյանի քնարերգությունը: **Թեմա 13** Ե. Չարենցի պոեզիան: **Թեմա 14.** Ուրվագիծ արևմտահայ պոեզիայի /Դուրյան, Մեծարենց, Վարուժան, Թեքեյան/: **Թեմա 15.**Սփյուռք - «Կարոտի» և «Նահանջի» գրականության ուրվագիծ / Համաստեղ, Մնձուրի, Շ. Շահնուր/: **Թեմա 16**Ավանդույթ և նորարարություն, համառոտ ակնարկ / Հ. Սահյան, Պ. Սևակ, Հր. Մաթևոսյան /:

Պ/բ-0453 Հայոց պատմության հիմնահարցեր - 1 (2կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար պարապմունք)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի առաջին մասի դասավանդումը նպատակ ուսանողին գիտելիքներ տալ հայոց պատմության հին, միջին և նոր շրջանների ազատագրական պայքարի պատմության վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կինանա V-XIX դարերի հայ ազատագրական պայքարի պատմությունը,
- կկարողանա ներկայացնել Հայաստանի ազատագրության ծրագրերը
- կկարողանա ներկայացնել հայ ազատագրական շարժման նախադրյալները, ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության սկզբնավորումը
- կտիրապետի հայ ազատագրական պայքարի պատմության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիքների
- կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը.

Թեմա 1. V դ. ազատագրական պայքարը **Թեմա 2.** VI-VII դդ. ազատագրական պայքարը: **Թեմա 3.** VIII-IX դդ. ազատագրական պայքարը արաբական տիրապետության դեմ **Թեմա 4.:** Հայաստանի ազատագրական ծրագրերը **Թեմա 5.** Հայ ժողովրդի ազատագրական որոնումները XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարի առաջին քառորդին **Թեմա 6.** Հովսեփ Էմինը և Հայաստանի ազատագրության նրա ծրագիրը **Թեմա 7.** Հայաստանի ազատագրության ծրագրերը XVIII դարի II կեսին **Թեմա 8.** Ազատագրական պայքարը Սյունիքում և Արցախում **Թեմա 9.** Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին **Թեմա 10.** Հայ հասարակական քաղաքական հոսանքները **Թեմա 11** Արևմտահայ ազգային ազատագրական շարժումների վերելքը XIX դ. 90-ական թթ: **Թեմա 12.** Հայկական հարցի ծագումը և նրա միջազգայնացումը: **Թեմա 13.** Ֆիդայական շարժումը: **Թեմա 14.** Հայ ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները:

Պ/բ-0453 Հայոց պատմության հիմնահարցեր - 2 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար պարապմունք)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի երկրորդ մասի դասավանդումը նպատակ ունի ուսանողին գիտելիքներ տալ հայոց պատմության նոր շրջանի ազատագրական պայքարի պատմության, Հայոց Մեծ եղեռնի, հայոց պետականության պատմության վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- իմանա Հայոց Մեծ եղեռնի պատմությունը, կկարողանա ներկայացնել 1915թ. ինքնապաշտպանական մարտերը
- կկարողանա ներկայացնել մայիսյան հերոսամարտերը և հայոց պետականության վերականգնման նախադրյալները
- կտիրապետի արցախյան շարժման և անկախ պետականության վերականգնման պատմությանը

Բովանդակությունը.

Թեմա 1. Ազգային կուսակցությունների առաջացումը: ***Թեմա 2.*** Հայկական հարցը 1912-1914թթ.: ***Թեմա 3*** Հայոց Մեծ եղեռնը: ***Թեմա 4.*** 1915թ. ինքնապաշտպանական մարտերը: ***Թեմա 5*** 1918 թ. մայիսյան հերոսամարտերը. Հայաստանի հանրապետության հռչակումը: ***Թեմա 6.*** Հայաստանի Առաջին հանրապետությունը 1918-1920 թթ. ***Թեմա 7.*** Արցախյան շարժման նոր փուլը: ***Թեմա 8.*** Հայաստանի անկախության հռչակագիրը. անկախ պետականության վերականգնումը: ***Թեմա 9.*** Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները

ՈԼ0081 Ռուսաց լեզու - 1 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ձևավորել ռուսերենի իմացության այնպիսի մակարդակ, որը կապահովի ուսանողների ռուսերենով հաղորդակցվելու, երկխոսություն ծավալելու ունակությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ռուսերենով ճիշտ կառուցել իր բանավոր խոսքը.
- ծավալել երկխոսություն ինչպես նեղ մասնագիտական, այնպես էլ այլ ոլորտներում.
- կիրառել ռուսաց լեզվի քերականական կառուցվածքը.
- վերլուծել, մեկնաբանել և վերարտադրել մասնագիտական և այլ բնույթի (գեղարվեստական և ճանաչողական) տեքստեր:

Բովանդակությունը.

Թեմա 1. Խաղաղության մշակույթ: ՀՀ ներքին և արտաքին քաղաքականությունը: Տեսական նյութ. Հնչյունաբանություն: Ռուսաց լեզվի հնչյունական համակարգը; ռուսերենի շեշտ; բանավոր և գրավոր խոսքի հնչերանգը: **Թեմա 2.** Ռուսաց լեզուն որպես ՄԱԿ-ի աշխատանքային լեզուներից մեկը: Քերականական նյութ. Գոյականի քերականական սեռը: Ընդհանուր քերականական սեռի բառեր: Որոշչի համաձայնեցումը գոյականի հետ: Քերականական կառույցների կազմում: **Թեմա 3.** Մարդ: Դիմանկար: Բնավորություն: Ընտանիք: Քերականական նյութ. Որոշչի համաձայնեցումը գոյականի հետ: Քերականական կառույցների կազմում: Գոյականների հոլովները: **Թեմա 4.** Տուն, բնակարան, քաղաք, որում ես ապրում եմ: Քերականական նյութ. Գոյականի թիվը: Եզակի թիվ, հոգնակի թիվ: Անեզական և անհոգնական գոյականներ: **Թեմա 5.** Կրթություն: Կրթության համակարգը Հայաստանում: Քերականական նյութ. Ածական անուն: Որական, հարաբերական և ստացական ածականներ: Ածականի համեմատական աստիճանները: Ամբողջական և կրճատ ձևերը: Նրանց կիրառությունը կապակցություններում և նախադասություններում: Քերականական կառույցների կազմում: **Թեմա 6.** Երիտասարդությունը 21 դարում: Քերականական նյութ. Թվական անուն: Թվականի

տեսակները, ուղղագրությունը, կապակցությունները և շարահյուսական դերը: Քերականական կառույցների կազմում: **Թեմա 7.** Աշխատանքի նշանակությունը մարդու կյանքում: Քերականական նյութ.Դերանուն: Դերանունների տեսակները: Քերականական կառույցների կազմում:

ՈԼ0081 Ռուսաց լեզու - 2 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք)

2-րդ կիսամյակ, ստուգաք

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ուսանողի մոտ ձևավորելու ռուսերեն լեզվի այնպիսի մակարդակ, որը կապահովի տվյալ լեզվով հաղորդակցումը, սեփական տեսակետը արտահայտելու և երկխոսություն ծավալելու նրա ունակությունը մասնագիտական և այլ ոլորտներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կյուրացնի ռուսաց լեզվի ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները.
- կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինային համակարգին.
- կտիրապետի մասնագիտական տեքստի քերականական առանձնահատկություններին, կարգերին և շարահյուսական կառուցածքներին.
- կկարողանա սեղմ ձևով ներկայացնել այս կամ այն մասնագիտական տեքստը, առանձնացնել նրանում պարունակվող հիմնական միտքը, նշել առանցքային բառերը (եզրույթները), ընդգծել տվյալ հոդվածում պարունակվող գիտական նորույթը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գիտություն և տեխնիկա: Քերականական նյութ: Բայ: Բայի եղանակավորում: Սահմանական, ըղծական և հրամայական եղանակները: Քերականական կառույցների կազմում: **Թեմա 2.** Մշակույթ և արվեստ: Քերականական նյութ: Բայ: Բայի եղանակավորում: Սահմանական, ըղծական և հրամայական եղանակները: Քերականական կառույցների կազմում: **Թեմա 3.**

*Առողջություն: Հանդիս: Սպորտ: Ժամանց: Քերականական նյութ: Բայ: Բայի եղանակավորում: Սահմանական, ըղծական և հրամայական եղանակները: Քերականական կառույցների կազմում: **Թեմա 4. Բնություն: Բնապահպանություն: Էկոլոգիա:** Քերականական նյութ: Դերբայ: Դերբայների տեսակները: Ժամանակի պարագա և տեղի պարագա: Կառավարման սկզբունքով կառուցված պարագայական կապակցություններ: Քերականական կառույցների կազմում: **Թեմա 5. ՁԼՄ-ներ և դրանց դերը ուսաց լեզվի ուսուցման օրծում:** Քերականական նյութ: Դերբայ: Դերբայների տեսակները: Քերականական կառույցների կազմում: Շարահյուսություն: Պարզ և բարդ նախադասություններ: **Թեմա 6. Հայրենիք: Մեր հանրապետությունը: Կենսաձևը Հայաստանում:** Շարահյուսություն: Պարզ և բարդ նախադասություններ: Կետադրություն:*

ՕԼ0671 Մասնագիտական օտար լեզու (Անգլերեն) 1 - 4 կրեդիտ

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկնդրել, կարդալ, խոսել, գրել):

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կհարստացնի ակտիվ և ներգոր բառապաշարը.
- կսովորի անգլերեն լեզվի քերականության հատուկ բարդություն ունեցող երևույթները.
- ձեռք կբերի անգլերեն լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Արտասանություն, ուղղախոսություն. անգլերեն լեզվի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, հնչյունների և հնչույթների արտասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը: **Թեմա 2.** Բառապաշար, բառակազմություն. հիմնական բառակազմական միջոցներ (ածանցում, բառաբարդում, փոխակարգում): **Թեմա 3.** Քերականություն. խոսքի մասերի քերականական կարգերը, նախադասության շարադասությունը (ուղիղ և շրջուն): **Թեմա 4.** Առաջարկվող թեմաներ. ընտանիք, ընտանեկան հարաբերություններ և ավանդույթներ, իմ հետաքրքրությունները, ճանապարհորդություն, երազանքներ, իմ ապագա մասնագիտությունը, շրջակա միջավայր և նրա պահպանումը և այլն:

OL0672 Մասնագիտական օտար լեզու (Անգլերեն) 2 - 4 կրեդիտ

Շարաքական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք)

2-րդ կիսամյակ, ստուգաք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա համակարգել նախորդ փուլում յուրացրած քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա.
- կունենա օտար լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ.
- կկարողանա ընկալել լսած/կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:

Բովանդակությունը.

Ձեմա 1. Ուղղախոսություն, ուղղագրություն. անգլերենի արտասանական առանձնահատկությունները, տարբեր տիպի նախադասությունների հնչերանգն ու խոսքի առոգանությունը, ուղղագրական հիմնական կանոնները: **Ձեմա 2.** Բառապաշար, բառակազմություն. վերարտադրողական և ընկալողական բառապաշարի ընդլայնում: **Ձեմա 3.** Քերականություն. նախորդ փուլում յուրացրած քերականական նյութի (անվանողական և բայական կարգերի) համակարգում հաղորդակցական սկզբունքի հիման վրա: **Ձեմա 4.** Հանրամշակութային գիտելիքներ անգլախոս երկրների մշակույթի և լեզվակիր ժողովուրդների հասարակական կյանքի մասին:

OL0672 Մասնագիտական օտար լեզու (Անգլերեն) 3 - 4 կրեդիտ

Շարաքական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին զինել հիմնարար գիտելիքներով անգլերեն լեզվի քերականության ձևաբանության և շարահյուսության բաժինների և բանավոր խոսքի հիմունքների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա համակարգել քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա.
- կունենա օտար լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ.
- կկարողանա ընկալել լսած/կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:

Բովանդակությունը

Թեմա 1 – Մակբայների համեմատության աստիճանը, Ածականների համեմատության աստիճանը: **Թեմա 2** - Անգլերեն լեզվի ժամանակաձևերի ուսումնասիրություն, Ներկա և անցյալ վաղակատար ժամանակաձևեր: **Թեմա 3** - Միացյալ թագավորություն, աշխարհագրական բառապաշար, լրացուցիչ տեղեկություններ Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության մասին: **Թեմա 4** - Հողերի կիրառությունը հատուկ անունների հետ, գոյականական ածանցներ:

OL0671 Մասնագիտական օտար լեզու (Գերմաներեն) 1 – 4 կրեդիտ

Շարաքական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք, —

1-ին կիսամյակ, ստուգաթք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ համակարգել դպրոցում ձեռք բերած գիտելիքները գերմաներեն ձևաբանության և քերականության բնագավառներում, ինչպես նաև ընդլայնել թեմատիկ բառապաշարը, ակտիվացնել այդ բառապաշարը համապատասխան երկխոսությունների և տեքստերի վերարտադրության նպատակով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջորդ ավարտին ուսանողը.

- գործնականում կկիրառի գերմաներենի ձևաբանական և քերականական այն կառույցները, որոնք ուսումնասիրվում են այս փուլում
- կտիրապետի համապատասխան թեմատիկ բառապաշարին

Բովանդակությունը.

Թեմա 1. Եղանակավորող բայեր, սուբյեկտային և օբյեկտային բայեր: **Թեմա 2.** Ածական անուն. **Թեմա 3.** Հոմանիշ և հականիշ բայեր: Ամենատարածված ասացվածքները գերմաներեն և հայերեն լեզուներով: Բառի բազմիմաստությունը. **Թեմա 4.** Ազատ թեմաների ինքնուրույն կազմում “Այսօր իմ ծննդյան օրն է”, “Իմ մասնագիտությունը”, “Գերմանիայի քաղաքները”, մի շարք բանաստեղծություններ Հ. Հայների, Վ. Գյոթերի ստեղծագործություններից:

OL0672 Մասնագիտական օտար լեզու (Գերմաներեն) 2 – 4 կրեդիտ
Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք),
2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Հարստացնել ուսանողների գիտելիքները բակալավրիատի ընդհանուր կրթական մակարդակով և ուսանողների բառապաշարային և քերականական գիտելիքները հասցնել այնպիսի մակարդակի, որ կարողանան արտահայտել իրենց մտքերը, առօրյա խոսակցական թեմաներով, ինչպես նաև կատարեն ազատ թարգմանություններ:

Կրթական արդյունքները.

- Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
- կկարողանա ունկնդրելով ճիշտ հասկանալ բանավոր խոսքը
- կկարողանա գրել փոխադրություն
- կկատարի համապատասխան թարգմանություն գերմաներեն լեզվից մայրենի և հակառակը:

Նկատի է առնվում նաև ուսանողի հաղորդակցական կարողությունների զարգացումը:

Բովանդակություն.

Թեմա 1. Գոյականների հոլովման համակարգը և հոլովների կիրառական նշանակությունը: **Թեմա 2.** Բայերի ձևաբանական և իմաստաքերականական դասակարգումը: **Թեմա 3.** Թեմատիկ բառապաշարը ընդգրկում է “Ես ուսանող եմ”, “Սուրճի սեղանի շուրջը” (վարվելաձևը սեղանի շուրջը), “Գրադարանում”, “Տարվա եղանակները”, “Իմ սիրելի գրողը”, “Հայաստանի պատմությունից”, “Գնումներ խանութում”, “Ընկերական շրջապատում” և այլն:

OL0672 Մասնագիտական օտար լեզու (Գերմաներեն) 3 - 4 կրեդիտ
Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք),
3-րդ կիսամյակ, ստուգարք, Նպատակը.

Ջարգացնել ուսանողների գիտելիքները լեզվի կառուցվածքի, առանձնահատկությունների, խոսքամասային ձևերի մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

- կկարողանա կառուցել հստակ ու սահուն խոսք՝ ճիշտ կիրառելով գերմաներեն լեզվի ժամանակաձևերը
- կկարողանա գրել շարադրություն
- կկատարի համեմատաբար բարդ թարգմանություններ գերմաներեն լեզվից մայրենի և հակառակը:

Բովանդակություն

Թեմա 1 Շեշտադրություն, ուղղագրություն, բառեր և քերականություն: **Թեմա 2** Հոդը, գործածությունը, բայ, հրամայական եղանակ, բառեր, շարադասություն: **Թեմա 3** Ֆոնետիկական վարժություններ, օժանդակ բայերի գործածությունը որպես ինքնուրույն բայեր, հարցական նախադաս. շարադասությունը, վարժություններ և տեքստ: **Թեմա 4** Ընթերցանության օրենքները, գոյական հոլովումը, դերանուն, բառակազմություն, արտասանություն, բառապաշարի ուսուցում: Գրավոր և բանավոր վարժություններ:

OL0671 Մասնագիտական օտար լեզու (Ֆրանսերեն) 1 - 4 կրեդիտ

Շաբաթական 4 ժամ - (64 ժամ գործնական պարապմունք),

1-ին կիսամյակ, ստուգաթղթ

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր և գրավոր խոսքի ունակություններ, ուղղախոսական-ուղղագրական հմտություններ, տեքստի հետ ինքնուրույն աշխատելու և հաղորդակցվելու կարողություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա ճիշտ արտաբերել ֆրանսերենի հնչյունները, ընդհանուր պատկերացում կունենա ֆրանսերենի ուղղախոսական նորմերի մասին,
- կկարողանա ճիշտ հնչերանգով ձևակերպել հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները. դադար, շեշտ, հիմնական հնչերանգ, մեղեդային եզրափակում, տեմպ,
- կկարողանա ընթերցել ադապտացված տեքստեր, հաղորդակցվել ֆրանսերենով:

Բովանդակությունը

Թեմա 1. Ֆրանսերենի հնչյունական համակարգը: Ուղղախոսական-ուղղագրական առանձնահատկությունները: **Թեմա 2.** Ֆրանսերենի քերականության ընդհանուր բնութագիրը և հիմնական առանձնահատկությունները: **Թեմա 3.** Հոդերի տեսակները և դրանց գործածության առանձնահատկությունները: **Թեմա 4.** Գոյականի քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: Իգական սեռի և հոգնակի թվի կազմությունը: **Թեմա 5** Թվական անուն: **Թեմա 6.** Հարցական ու ժխտական նախադասությունների կազմությունը: **Թեմա 7** Ֆրանսերենի առավել գործածական նախդիրներն ու շաղկապները:

OL0672 Մասնագիտական օտար լեզու (Ֆրանսերեն) 2 - 4 կրեդիտ

Շաբաթական 4 ժամ - (64 ժամ գործնական պարապմունք),

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերեն լեզվի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային պարզ հմտություններ, գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա ճիշտ արտասանությամբ ձևակերպել նախադասությունը,
- կկարողանա լսելով հասկանալ և վերաշարադրել տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը,
- կկարողանա զրույց վարել անցած թեմաներով:

Բովանդակությունը.

Թեմա 1. Սահմանական եղանակի պարզ ժամանակաձևերը: **Թեմա 2.** 3-րդ խմբի հիմնական անկանոն բայերը: **Թեմա 3.** Հրամայական եղանակի կազմությունը: **Թեմա 4.** Դերանվանական բայեր: **Թեմա 5.** Ածական անուն, համեմատության աստիճանների կազմությունը: **Թեմա 6.** Դերանվանական ածականներ /ստացական, ցուցական,, անորոշ: **Թեմա 7.** Ֆրանսերենի բառակազմական միջոցները: Գործածական նախածանցներն ու վերջածանցները:

OL0673 Մասնագիտական օտար լեզու (Ֆրանսերեն) 3 - 4 կրեդիտ

Շաբաթական 4 ժամ - (64 ժամ գործնական պարապմունք),

3-րդ կիսամյակ, ստուգաք

Նպատակը.

Ամրապնդել և զարգացնել ուսանողների՝ ֆրանսերենի բառապաշարի և քերականության վերաբերյալ ունեցած գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել գրագետ գրավոր և բանավոր խոսք կազմելու հմտություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա կարդալ, ընկալել, վերարտադրել և թարգմանել ընդհանուր հաղորդակցական նշանակության տեքստեր.
- կկարողանա ֆրանսերեն լեզվով հաղորդակցվելառօրյա թեմաների շուրջ:

Բովանդակությունը

Թեմա 1. Սահմանական եղանակի հիմնական բաղադրյալ ժամանակաձևերի կազմությունն ու գործածությունը: **Թեմա 2.** ժամանակների համաձայնեցումը: **Թեմա 3.:** Անդեմ բայեր ու արտահայտություններ: **Թեմա 4.** Դերանունների հիմնական տեսակները (ստացական, ցուցական, անորոշ, հարաբերական), դրանց քերականական կարգերի բնութագիրը: **Թեմա 5.** Մակբայների տեսակներն ու քերականական կարգերը:

Փ/բ-047Փիլիսոփայությանն հիմնահարցեր -4 կրեդիտ

Դասախոսություն – 28 ժամ, գործնական - 20 ժամ

4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

- Ուսանողներին զինել գիտելիքներով փիլիսոփայության և նրա խնդիրների մասին:
- Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական գիտելիքների պաշարը:
- Ուսանողներին գաղափար տալ մարդու էության, բնության և հասարակության օրենքների և օրինաչափությունների մասին:
- Օգնել ուսանողներին՝ տեսական գիտելիքները օգտագործել գործնականում:
- Հիմք ստեղծել հասարակական մյուս գիտությունների հետագա ուսումնասիրության համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- տիրապետի փիլիսոփայության հետազոտության մեթոդներին,
- կարողանա ըմբռնել բնության և հասարակական օրենքների բնույթը,

- կարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:
- կարողանա տարբերակել փիլիսոփայական տարբեր ուղղությունների առանձնահատկությունները:
- որպես մեթոդաբանություն փիլիսոփայությունը կիրառեն այլ գիտությունների ուսումնառության ընթացքում:

Բովանդակությունը.

Թեմա 1 Փիլիսոփայությունը որպես գիտություն: **Թեմա 2** Փիլիսոփայության զարգացման պատմական էտապները: **Թեմա 3** Մատերիա և կեցություն: **Թեմա 4** Հոգևորի պրոբլեմը փիլիսոփայության մեջ: **Թեմա 5** Ձարգացման հիմնախնդիրը: **Թեմա 6** Իմացության տեսություն: **Թեմա 7** Գիտական իմացության յուրահատկությունը: **Թեմա 8** Սոցիալական փիլիսոփայություն: **Թեմա 9** Հասարակության սոցիալ-տնտեսական համակարգը: **Թեմա10** Հասարակության քաղաքական համակարգը: **Թեմա 11** Մարդու հիմնախնդիրը փիլիսոփայության մեջ: **Թեմա12** Հասարակական գիտակցություն: **Թեմա13** Արժեքաբանության փիլիսոփայություն:

Կամընտրական դասընթացներ

Փ/բ-0481Մշակութաբանություն - 2 կրեդիտ

Դասախոսություն – 18 ժամ, գործնական - 14 ժամ, (շաբաթական - 3 ժամ) 3-րդ կիսամյակ, ստուգաք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին հաղորդակից դարձնել համաշխարհային մշակույթի զարգացման ընթացքին և առանձին իրողություններին, ներկայացնել համաշխարհային մշակույթի պատմությունը և վերջինիս համատեքստում հայ ազգային մշակույթի զարգացման առանձնահատկությունները, ուսանողին զինել համապատասխան մեթոդիկայով՝ ճանանչելու, վերլուծելու և գնահատելու

մշակութային առանձին երևույթներ, օգնել մշակելու գնահատման ազգային, անհատական և համամարդկային չափանիշներ, ինչպես նաև դրսևորել ինքնուրույն մոտեցումներ մշակույթի և նրա առանձին դրսևորումների նկատմամբ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Պետք է իմանա

- մշակույթի բնորոշումը, ծագումը, զարգացման օրինաչափությունները, նյութական և հոգևոր մշակույթների առանձնահատկությունները, մշակույթի նեղ և լայն առումները

Պետք է կարողանա

- ինքնուրույն տարբերակել հոգևոր և նյութական մշակույթները, նկատել նրանց փոխադարձ անցումները և տարրերի փոխներթափանցումները
- ընտրել մշակութային իրողությունների գնահատման չափանիշները
- ճանաչել մշակույթի զարգացման օրինաչափությունները
- մշակույթի առանձին դրսևորումները պատկերացնել համաշխարհային մշակույթի զարգացման համատեքստում
- ճանաչել և առանձնացնել լոկալ մշակույթների տիպերը (ըստ տարածքի, ժամանակաշրջանի, ազգայինի և մշակույթի տվյալ տիպի)

Պետք է տիրապետի

- մշակութաբանության հետազոտական-վերլուծական հինգ մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Մշակութաբանության առարկան, խնդիրները, ուսումնասիրության շրջանակները: **Թեմա 2.** Մշակույթի բնորոշումը: **Թեմա 3.** Մշակույթի գործառույթները **Թեմա 4.** Մշակույթի լեզուն և կառուցվածքը: Ազգային և համամարդկային մշակույթ: **Թեմա 5.** Ջանգվածային և էլիտար մշակույթ: **Թեմա 6.** Հոգևոր գործունեության

մշակութային ձևերը: **Թեմա 7.** Բնություն և մշակույթ: **Թեմա 8.** Հասարակություն և մշակույթ: **Թեմա 9.** Քաղաքակրթություն և մշակույթ: Արդի տեսությունները:

Հ/բ-0335 Սոցիոլոգիա –2 կրեդիտ

Դասախոսություն –18 ժամ, սեմինար - 14 ժամ,

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել սոցիոլոգիայի պատմական անհրաժեշտության, հասարակության ուսումնասիրության համար ունեցած դերի, սոցիոլոգիական աշխարհայացքի բազմազանության և բազմաձևության մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ԳԻՏԵՆԱ՝

Հասարակությունն իբրև համակարգ, դրա հիմնական տարրերը, դրանց միջև փոխկախվածության գործընթացները և վերահսկողության մեխանիզմները:

-ԿԱՐՈՂԱՆԱ՝

Նախագծել սոցիալական որևէ երևույթի ուսումնասիրմանն ուղղված սոցիոլոգիական հետազոտության ծրագիր:

- ՏԻՐԱՊԵՏԻ՝

Սոցիոլոգիական հետազոտության մշակման հիմնական ձևերին, մեթոդներին, գործիքներին, վերլուծության եղանակներին:

Բովանդակությունը

Թեմա 1. Սոցիոլոգիան իբրև գիտություն:

1.Սոցիոլոգիայի ձևավորման նախադրյալները. բուրժուական հեղափոխություններ, իմպերիալիզմ, բնական և հասարակական գիտությունների նվաճումները: 2. Օ.Կոնտի պոզիտիվ տեսությունը. սոցիալական դինամիկա և սոցիալական ստատիկա, մարդկության ճանաչողական գործունեության զարգացման օրինաչափությունները, հասարակության ներդաշնակության խնդիրը: 3. Յ.Սպենսերի հասարակության օրգանական տեսությունը. սոցիալական էվոլյուցիա, հասարակության կայունության խնդիրը: 4. Է.Դյուրկհեյմի սոցիալական ռեալիզմի տեսությունը. սոցիոլոգիական մեթոդ, սոցիալական փաստ, կոլեկտիվ գիտակցություն, նորմա և պաթալոգիա, սոցիալական առողջություն: 5. Մ.Վեբերի «հասկացող սոցիոլոգիան». սոցիոլոգիայի խնդիրները, արժեքների խնդիրը, սոցիալական գործողության տեսություն: 6. Սոցիոլոգիայի ուսումնասիրման օբյեկտը, առարկան, մեթոդները, ֆունկցիաները: 7. Սոցիոլոգիական գիտելիքի կառուցվածքը. ա/ ընդհանուր տեսությունների մակարդակ՝ մակրոտեսություններ (կառուցվածքային ֆունկցիոնալիզմ, կոնֆլիկտի տեսություն), միկրոտեսություններ (փոխանակման տեսություն, էթնոմեթոդաբանություն, տպավորությունների կառավարման տեսություն, սիմվոլիկ ինտերակցիոնիզմ), բ/ միջին մակարդակի տեսությունների անհրաժեշտության խնդիրը ըստ Ռ.Մերտոնի, գ/ էմպիրիկ սոցիոլոգիա, դ/ մետասոցիոլոգիա: 8. Սոցիոլոգիայի կապը այլ գիտությունների հետ:

Թեմա 2. Սոցիոլոգիական հետազոտություն:

- կկարողանա կատարել հոգեկանի մասին գիտական պատկերացումների համեմատական վերլուծություն

Բովանդակությունը.

Թեմա 1 Հոգեբանության պատմության առարկան, խնդիրները, մեթոդները, առաջացումը և զարգացումը: **Թեմա 2** Հոգեբանական մտքի զարգացումը անտիկ շրջանում: **Թեմա 3** Հոգեբանական մտքի զարգացումը Հին Արևելքում: **Թեմա 4** Հոգեբանական մտքի զարգացումը միջնադարում, 17-19 -րդ դարերում: **Թեմա 5** Հոգեբանության հիմնական դպրոցները 19-րդ դարի վերջին: **Թեմա 6** Ֆրեյդիզմ և նեոֆրեյդիզմ: Ֆրեյդիզմի առաջացման պատճառները: **Թեմա 7** Բիեյվորիզմ և նեոբիեյվորիզմ: **Թեմա 8** Գեշտալտ-հոգեբանություն: **Թեմա 9** Գենետիկական հոգեբանություն: **Թեմա 10** Էքզիստենցիալ-հումանիստական հոգեբանություն: **Թեմա 11** Կոգնիտիվիստական հոգեբանություն: **Թեմա 12** Սոցիոմետրիա: **Թեմա 13** Խորհրդային հոգեբանական դպրոցը:

Յ/բ-0311 Անձի հոգեբանություն - 4 կրեդիտ

Դասախոսություն 28 ժամ, գործնական 28 ժամ

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողներին զինել գիտելիքներով անձի հիմնախնդիրների, հոգեկանի մեխանիզմների և օրինաչափությունների, հոգեկանի կառուցվածքի, ինացական գործընթացների, մարդու անձնային և անհատական հոգեբանական առանձնահատկությունների մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կսիրապետի անձի հոգեբանական հետազոտության մեթոդներին,
- կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ,
- կկարողանա վերլուծության ենթարկել անձի զարգացման վերաբերյալ տեսությունները:
- կիմանա անձի ուսումնասիրման արդի խնդիրները, կհասկանա կառուցվածքային մոտեցումները, մեթոդաբանության տրամաբանությունը:

Բովանդակություն

Թեմա 1` Անձի հոգեբանության առարկան, խնդիրները: Անձի ուսումնասիրման առանձնահատկությունները: **Թեմա 2** Մարդու հիմնախնդիրը աշխարհի փիլիսոփայական պատկերի ներքո: **Թեմա 3`** Անձի հիմնախնդիրը համակարգային մոտեցման տեսանկյունից: **Թեմա 4`** Անձը պատմամշակութային և գործունեության տեսության ներքո: **Թեմա 5`** <<Համակարգ-գործունեություն>>մոտեցման սկզբունքները անձի հոգեբանության ուսումնասիրման համատեքստում: **Թեմա 6`** Անձի ծրվարումը և սոցիալականացումը: Անձի զարգացման շարժիչ ուժերը և պայմանները: **Թեմա 7`** Մարդը որպես անհատ, կենսագենետիկ ուղղությունը հոգեբանության մեջ: **Թեմա 8`** Մարդը որպես անձ, սոցիոգենետիկ ուղղությունը հոգեբանության մեջ: **Թեմա 9`** Մարդը որպես անհատականություն, պեսոգենետիկ ուղղությունը անձի հոգեբանության մեջ: **Թեմա 10`** Պահանջմունքներ և դրդապատճառներ **Թեմա 11`** Ինքնագիտակցության հիմնախնդիրը: <<Ես>> կոնցեպցիա: **Թեմա 12`** Անձը և նրա կենսատարածքը, անձը որպես սեփական կյանքի սցենարի հեղինակ: **Թեմա 13`** Անձի սուբյեկտային մոտեցումը: Հոգեբանական կանխարգելիչ օգնություն անձին: **Թեմա 14`** Անձնային հատկությունների ձևավորումը: Անձ և շփում:

Չ/բ-1158 Ղիֆերենցիալ հոգեբանություն – 6 կրեդիտ

Դասախոսություն – 24 ժամ, գործնական - 24 ժամ, 48 ժամ լաբորատոր (շաբաթական 2 ժամ)

4-րդ կիսամյակ քննություն

Նպատակը.

Ուսանողներին զինել գիտելիքներով անհատական տարբերությունների (խառնվածք, բնավորություն, ընդունակություններ), հոգեբանության արդի հիմնախնդիրների, անհատական առանձնահատկությունների դասակարգման չափանիշների, խառնվածքի, բնավորության և ընդունակությունների զարգացման մեխանիզմների և օրինաչափություններ վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա անհատական առանձնահատկությունների դասակարգման չափանիշները
- կհասկանա խառնվածքի, բնավորության և ընդունակությունների զարգացման մեխանիզմները և օրինաչափությունները
- կկարողանա վերլուծել անհատական տիպոլոգիական առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց ձևավորման նախադրյալները և պայմանները

Բովանդակությունը.

Թեմա 1 Դիֆերենցիալ հոգեբանության առարկան, խնդիրները: **Թեմա 2** Խառնվածքի սահմանումը, կենսաբանական հիմքերը: **Թեմա 3** Խառնվածքի տեսությունները: **Թեմա 4** Խառնվածքը բնորոշող հոգեկան հատկությունները: **Թեմա 5** Խառնվածքի տիպերի դասակարգումը, նրանց հոգեբանական բնութագիրը: Խառնվածքը և գործունեության անհատական ոճը: **Թեմա 6** Խառնվածքը և անձնավորությունը: **Թեմա 7** Խառնվածքի կապը հոգեկան այլ հատկությունների հետ (բնավորություն, ընդունակություններ և այլն): **Թեմա 8** Խառնվածքի տիպը և անձի հակվածությունը վարքի շեղումների նկատմամբ: **Թեմա 9** Բնավորության ընդհանուր բնութագիրը,

Ֆիզիոլոգիական հիկքերը: **Թեմա 10** Բնավորության գծերի դասակարգումը: **Թեմա 11**
Բնավորության կառուցվածքը, անհատական առանձնահատկությունները: **Թեմա 12**
Բնավորության տիպավորումը: **Թեմա 13** Բնավորության կապը այլ հոգեկան
հատկությունների հետ: **Թեմա 14** Ընդունակությունների ուսումնասիրման
հիմնախնդիրը հոգեբանության մեջ: **Թեմա 15** Ընդունակությունների դասակարգումը,
առանձնահատկությունները: **Թեմա 16** Օժտվածություն, տաղանդ, հանճար: **Թեմա 17**
Մանկավարժական ընդունակությունների կառուցվածքը: **Թեմա 18**
Ընդունակությունների ձևավորումը:

Յ/մ-0358 Փորձարարական հոգեբանություն - 5կրեդիտ

Դասախոսություն - 32(ժամ), սեմինար - 40(ժամ)

4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

- ուսանողներին զինել գիտելիքներով հոգեբանական գիտափորձի օրինաչափությունների, տեսակների, առանձնահատկությունների մասին,
- սովորեցնել իրականացնել գիտափորձի պլանավորում, վերահսկողություն, կազմակերպում և արդյունքների վերլուծություն,
- խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական, կիրառական և մեթոդական գիտելիքները,
- հաղորդել գիտելիքներ հոգեբանի բարոյական օրենսգրքի վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

- ցուցաբերել փորձարարական հոգեբանության առարկայի հիմնական հասկացությունների, չափողական սանդղակների իմացություն,

- ցուցաբերել գիտափորձի իրականացման առանձնահատկությունների ցուցաբերել,
- իրականացնել հետազոտություն և կատարել արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն:

Բովանդակություն

Թեմա 1 Փորձարարական հոգեբանության ծագումը, առարկան: Է. Վեբերի, Գ. Յելմհոլցի, Գ. Էբինհաուզի, Ս. Յոլի և այլ խոշորագույն գիտնականների ներդրումը փորձարարական հոգեբանության զարգացման գործում: **Թեմա 2** Փորձարարական հոգեբանական դպրոցները: Գերմանական դպրոցը: Ֆրանցիական դպրոցը: Վյուրցբյուրգյան դպրոցը: Անգլիական դպրոցը: Ամերիկյան դպրոցը: Ռուսական դպրոցը: **Թեմա 3** Չափողական սանդղակներ և վիճակագրության պարամետրիկ և ոչ պարամետրիկ մեթոդները: Չափողական սանդղակներ: Անվանական, հերթականության, ինտերվալային, հարաբերությունների սանդղակներ: Պարամետրիկ և ոչ պարամետրիկ մեթոդների կիրառությունը: **Թեմա 4** Գիտափորձի մեթոդի էությունը, դերն ու նշանակությունը հոգեբանության մեջ: Գիտափորձի տեսակները: Անբասիր, անվերջ, իդեալական գիտափորձեր: **Թեմա 5** Գիտափորձի արտաքին և ներքին վալիդականություն: Արտաքին և ներքին վալիդականության էությունը: Ներքին վալիդականության վրա ազդող գործոնները: **Թեմա 6** Գիտափորձի պլանավորումը հոգեբանության մեջ: Գիտափորձի պլանավորման հիմնական փուլերը: Կախյալ և անկախ փոփոխականներ: Փորձարարական և ստուգիչ խմբեր: Միջխմբային և ներխմբային փոփոխականների վերահսկում: Ոչ փորձարարական, բայց էմպիրիկ հետազոտություններ: **Թեմա 7** Գիտափորձի պլանավորման հատուկ մեթոդները: Գործոնային պլաններ: Քվազիփորձարարական պլաններ: Ֆունկցիոնալ պլաններ: **Թեմա 8** Սուբյեկտիվ փոփոխականների վերահսկում: Պատահական ընտրանքով պլան: Ձույզերով խմբավորված հետազոտվողների պլան: Ներխմբային դասավորություն: Կրկնակի չափումներով պլան: Փորձարկվողի կորուստ: **Թեմա 9** Գիտափորձի վերահսկման պրոբլեմը: Վերահսկման տիպերը: Ուսուցում քնած ժամանակ: Սոցիալական դեպրիվացիա և սոցիալական ամրապնդում: Պերցեպտիվ պաշտպանություն: **Թեմա 10** Հոգեբանական հետազոտության տեսակները,

խնդիրներն ու առանձնահատկությունները: Հետազոտության տեսակները և դրանց համառոտ բնութագիրը: **Թեմա 11** Հետազոտության քանակական և որակական պլանները: Համահարաբերակցական հետազոտություն: Հարցման, դիտման մեթոդների առավելություններն ու թերությունները: Արխիվային, էթնոգրաֆիկ հետազոտություններ, առանձին դեպքի պատմություն: Քանակական և որակական պլանների համեմատություն: **Թեմա 12** Գիտական հետազոտության փուլերը: Հետազոտական գործընթացի հիմնական փուլերը: Վարկածների տեսակները: **Թեմա 13** Գիտության մեջ կիրառվող հնարքները: Գիտական մտավախության տեսակները: Կեղտոտ հնարքներ՝ ֆաբրիկացիա և ֆալսիֆիկացիա: Կասկածելի հնարքներ: Մաքուր հնարքներ: Ֆորիաների առաջացման պատճառները և տեսակները: **Թեմա 14** Գիտափորձի արդյունքների առաջնային և երկրորդական վիճակագրական մշակման մեթոդները: Ընտրական միջին մեծություն, դիսպերսիա, մեդիանա, մոդա հասկացությունները հոգեբանության մեջ: Փորձարարական տվյալների երկրորդական վիճակագրական վերլուծության մեթոդների դասակարգումը: **Թեմա 15** Գիտափորձի արդյունքների ներկայացման ձևերը: Հետազոտողի և հետազոտվողի անձն ու գործունեությունը: Աղյուսակների, գրաֆիկների կամ գծանկարների, հիստոգրամաների կիրառումն ու առանձնահատկությունները: Հետազոտողի և հետազոտվողի անձն ու գործունեությունը: Փորձարարական հաղորդակցում: Հետազոտվողների տիպերը: **Թեմա 16** Հայտնի դասական գիտափորձերը:

Հայտնի դասական գիտափորձեր: <<Ավերսիա>>, <<Ես և ուրիշները>>, <<Տիկնիկ Բոբո>>, Ստենդֆորդի, Ռինգելմանի, Վալինսի, Միլգրեմի, Լենդիսի գիտափորձերը:

Հ/բ-1159 Հուզականային ոլորտի հոգեբանություն և պրակտիկում – 6 կրեդիտ

Դասախոսություն – 24 ժամ, գործնական - 24 ժամ, լաբորատոր - 44 ժամ, (շաբաթական 2 ժամ)

3-րդ կիսամյակ քննություն

Նպատակը.

Ուսանողներին զինել գիտելիքներով հույզերի ծագման, հույզերի մեկնաբանման տեսությունների, գործունեության և առօրյա փոխհարաբերություններում անձի

կենսագործունեության վրա անդրադարձող առանձնահատուկ հոգեվիճակների վերաբերյալ, հույզերի վերաբերյալ տեսությունների, դրանց դասակարգման, օրգանիզմի և ընդհանուր ակտիվության վրա հույզերի ազդեցության օրինաչափությունների վերաբերյալ, կամքի վերաբերյալ տեսությունների, ֆունկցիաների, կամային գործունեության տեսակների, անձնավորության կամային որակների ձևավորման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա հույզերի վերաբերյալ տեսությունները, դրանց դասակարգումը
- կհասկանա օրգանիզմի և ընդհանուր ակտիվության վրա հույզերի ազդեցության օրինաչափությունները
- կկարողանա տարբերակել հույզերի բնույթը, ճանաչել արտաքին դրսևորման ձևերը

Բովանդակությունը.

Թեմա 1 Հույզերի ընդհանուր բնութագիրը, ֆիզիոլոգիական հիմքերը, տեսակները:
Թեմա 2 Հույզերի տեսությունները: **Թեմա 3** Հույզերը կենդանիների և մարդկանց մոտ, հույզերի ֆունկցիաները: **Թեմա 4** Ձգացմունքի սահմանումը, ֆունկցիաները, որակները: **Թեմա 5** Ձգացմունքի ապրման ձևերը: **Թեմա 6** Սթրես, նրա տեսակները և փուլերը: **Թեմա 7** Ֆրոստրացիա, պաշտպանության մեխանիզմները, ֆունկցիաները և տեսակները: **Թեմա 8** Աֆեկտ, տեսակները, էտապները: Տրամադրությունը, առաջացման պատճառները: **Թեմա 9** Բարոյական և պրակտիկ զգացմունքներ: **Թեմա 10** Ստավոր և գեղագիտական զգացմունքներ: **Թեմա 11** Ձգացմունքներ և անձնավորություն, զգացմունքների դաստիարակումը: **Թեմա 12** Կամքի սահմանումը, ֆիզիոլոգիական հիմքերը, ֆունկցիաները: **Թեմա 13** Կամքի տեսությունները: **Թեմա 14** Կամային գործունեության տեսակները, կառուցվածքը: **Թեմա 15** Կամային գործունեության որակները և նրանց ձևավորումը: **Թեմա 16** Համարձակության, ռիսկի հոգեբանություն:

Յ/բ-0313 Ընտանիքի հոգեբանության հիմնահարցեր –4 կրեդիտ
Դասախոսություն –28 ժամ, գործնական - 28 ժամ, (շաբաթական
3ժամ) 3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողներին զինել գիտելիքներով, որոնց օգնությամբ նրանք կկարողանան ընտանիքի հոգեբանության հիմնահարցերին և առաջացած խնդիրներին տալ մասնագիտական ,հոգեբանական լուծումներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կտիրապետի ընտանեկան հոգեբանության հետազոտության մեթոդներին,
- կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը

Թեմա 1 .Ընտանիքի հոգեբանության առարկան ,խնդիրները ,սկզբունքները, մեթոդները: **Թեմա 2.** Ընտանիքի հիմնական ֆունկցիաները: **Թեմա 3** Սեր և խանդ: Խանդի բաղադրիչները: **Թեմա 4.** Ապագա ամուսնու ընտրությունը: Հոգեբանական համատեղելիություն: **Թեմա 5.** Մինչամուսնական սեռական կյանք: Արտամուսնական կապեր: **Թեմա 6.** Ներընտանեկան կոնֆլիկտներ.պատճառները,տեսակները: Ներընտանեկան կոնֆլիկտ և փակուղի: Փակուղուց դուրս գալու միջոցները: **Թեմա 7.** Ամուսնալուծության պատճառները և հետևանքները: **Թեմա 8** Երեխան որպես ընտանիքի լիարժեք անդամ:

Յ/բ-0321 Էթնոհոգեբանություն –3 կրեդիտ

Դասախոսություն –24 ժամ, գործնական – 26 ժամ,
(շաբաթական 2 ժամ) 5-րդ կիսամյակ, ստուգարք
Նպատակը.

Ուսանողներին զինել գիտելիքներով էթնոհոգեբանական հիմնախնդիրների, էթնոհոգեբանական հիմնական հասկացությունների, էթնոսների տեսակների և զարգացման փուլերի, միջէթնիկական հարաբերությունների, էթնիկական ինքնագիտակցության և ինքնիմացության, էթնիկական ստերեոտիպերի, էթնոցենտրիզմի, էթնոքաղաքականության և այլ էթնոհոգեբանական հասկացությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա էթնիկական հոգեբանության հիմնական խնդրացանկը
- ծանոթ կլինի էթնիկական խմբերի դինամիկայի օրինաչափություններին
- կկարողանա դուրս բերել միջէթնիկական փոխհարաբերությունների ու փոխազդեցությունների առանձնահատկությունները:

Բովանդալություն

Թեմա 1. էթնիկական հոգեբանության առարկան և խնդիրները: Թեմա 2. էթնիկական ինքնագիտակցություն: Թեմա 3. էթնոս և մշակույթ: Թեմա 4. էթնոպաշտպան մեխանիզմներ: Թեմա 5. էթնիկական ստերեոտիպեր և էթնոցենտրիզմ: Թեմա 6. էթնիկական հոգեկերտվածք: Թեմա 7. Ազգային բնավորություն: Թեմա 8. Մարզինակ կարգավիճակ: Թեմա 9. Ասիմիլյացիա: Թեմա 10. էթնոցենետիկ գործընթացներ:

Յ/բ-0319 Յոգեդիագնոստիկա - 6 կրեդիտ

Դասախոսություն - 44 ժամ, գործնական - 44 ժամ

5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

- ուսանողներին ծանոթացնել հոգեախտորոշման առարկայի ծագմանն ու զարգացման պատմությանը,
- զինել գիտելիքներով հոգեախտորոշման հիմնախնդիրների, հիմնական հասկացությունների, մեթոդների, մեթոդների կառուցմանը և ստուգմանը ներկայացվող հոգեչափողական պահանջների վերաբերյալ, սովորեցնել նրանց կառուցել հետազոտման գործիքներ և կիրառել այն պրակտիկայում,

- սովորեցնել իրականացնել անձի, ինտելեկտի, ընդունակությունների, միջանձնային հարաբերությունների ախտորոշում,
- ծանոթացնել տարբեր տարիքի մարդկանց հոգեախտորոշման առանձնահատկություններին և նրանց նկատմամբ կիրառվող մեթոդներին
- գիտելիքներ հաղորդել հոգեկան վիճակների կարգավորման մեթոդների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա հոգեախտորոշման հիմնական հասկացությունները, մեթոդների կառուցմանը և ստուգմանը ներկայացվող հոգեչափողական պահանջները,
- կիմանա անձի, ինտելեկտի, կրեատիվության, ընդունակությունների ախտորոշման եղանակները,
- կկարողանա իրականացնել տարբեր տարիքի երեխաների և մեծահասակների, ինչպես նաև միջանձնային հարաբերությունների ախտորոշում,
- կիմանա հոգեկան վիճակների կարգավորման մեթոդները:

Բովանդակություն

Թեմա 1. Հոգեախտորոշման ծագումն ու զարգացումը: Հոգեախտորոշման ձևավորումը մ.թ.ա. 3-րդ հազարամյակից սկսած: Հոգեախտորոշման գործընթացը Հին Եգիպտոսում, Բաբելոնում, Չինաստանում: Հոգեախտորոշման զարգացումը 19դ. վերջին: Փորձարարական հոգեբանությունը որպես հոգեախտորոշման հիմք: Վունդտի, Գալտոնի, Էբբինհաուզի Քեթթելի և այլոց դերը հոգեախտորոշման կայացման գործում: Հոգեախտորոշման զարգացումը Ռուսաստանում: **Թեմա 2.** Հոգեախտորոշման առարկան, ճյուղերը, կապը այլ գիտությունների հետ: Հոգեախտորոշման առարկայի սահմանումները ըստ Ռ. Հեյզի, Ա.Ա. Բողալյովի և Վ.Վ. Ստոլիցի, Կ.Ս.Գուրևիչի: Հոգեախտորոշման ճյուղերի. ընդհանուր, կրթական, կլինիկական, մասնագիտական, դատական հոգեբանաբուժական հոգեախտորոշման ընդհանուր բնութագիրը: Հոգեախտորոշման կապը դիֆերենցիալ հոգեբանության, հոգեչափման և հոգեբանական գնահատման հետ: **Թեմա 3.** Հոգեախտորոշման

նպատակը, գործընթացը: Հոգեախտորոշման ձևերը և 4 հիմնական փուլերը: Հոգեախտորոշիչ իրադրության տարբերակները ըստ Պրուժինի: **Թեմա 4.** Հոգեախտորոշիչ տեխնոլոգիայի սկզբունքը: Տվյալների հիմնական տեսակները: Հոգեախտորոշման մակարդակները: Հասկացություն LTQ տվյալների մասին:

Թեմա 5. Մեթոդների կառուցմանը և ստուգմանը ներկայացվող հոգեչափողական պահանջները: Ստանդարտացման, հուսալիության և վալիդության սահմանումները, նրանց էությունն ու տեսակները: Հիմնական հասկացություններն են՝ ստատիստիկ նորմա, ստանդարտային շեղում, գլխավոր միագումարություն, ընտրանք, գործոնային վերլուծություն: **Թեմա 6.** Հոգեախտորոշման հոգեբանական հիմքերը՝ թեստերի կառուցման հիմնական փուլերը: Թեստերի կառուցման ռազմավարությունը ըստ Բուրլաչուկի: Դիֆտոմիկ, տրիֆտոմիկ և ռեյտինգային սանդղակներ: Պիլոտաժային հետազոտություն: Առաջադրանքների վերլուծություն: **Թեմա 7.**

Հոգեախտորոշման մեթոդները: Թեստավորման մեթոդի ծագման պատմությունը, թեստերի դասակարգումը ըստ ձևի և բովանդակության: Հարցարաններ, նրա տեսակները: Դիտման, զրույցի, հարցազրույցի մեթոդներ, հոգեֆիզիոլոգիական մեթոդիկաներ: **Թեմա 8.** Անձի ախտորոշման պրոյեկտիվ մեթոդիկաներ: Պրոյեկտիվ ախտորոշման նախապատմությունը: Պրոյեկցիան որպես հոգեբանական ֆենոմեն: Անգիտակցականը և պրոյեկտիվ մեթոդիկաները: Պրոյեկտիվ տեխնիկաների դասակարգումը ըստ Ֆրանկի: Ռորշախի թանաքային բծերի մեթոդիկա, ԹԱԹ, Ռոզենցվեյգի նկարային ֆրուստրացիա, էքսպրեսիայի պրոյեկտիվ մեթոդիկաներ:

Թեմա 9. Ինտելեկտի ախտորոշում, ինտելեկտի թեստեր: <<Ինտելեկտ>> հասկացությունը հոգեբանության մեջ: Գալտոնի դերը ինտելեկտի ուսումնասիրման գործում: XX դ. մոտեցումները ինտելեկտի վերաբերյալ: Ինտելեկտի կառուցվածքը: Ինտելեկտուալ թեստեր: Խոսքային և ոչ խոսքային ինտելեկտի թեստեր: Խմբային ինտելեկտի թեստեր: **Թեմա 10.** Ինտելեկտի կախվածությունը ժառանգական և սոցիալական գործոններից: Ժառանգականությունը և ինտելեկտը: Ինտելեկտի գենետիկական պայմանավորվածության տեսությունը: Ինտելեկտը և կենսաբանական միջավայրը: Սոցիալական միջավայրը և ինտելեկտը: Ինտելեկտի զարգացումը տարբեր տարիքում: Ինտելեկտի զարգացման տարբերությունները ըստ ընտանիքում երեխաների թվի և նրանց ծնվելու հերթականության: Սեռային

տարբերությունները և ինտելեկտը: **Թեմա 11.** Կրեատիվության և ընդունակությունների ախտորոշում: Հասկացություն կրեատիվության մասին: Թերսթունի և Գիլֆորդի գաղափարները կրեատիվության վերաբերյալ: Դիվերգենտ և կոնվերգենտ մտածողություն: Գիլֆորդի և Թորենսի կրեատիվության թեստերը: Հատուկ ընդունակությունների տեսակները և թեստերը: **Թեմա 12.** Տարբեր տարիքի երեխաների հոգեախտորոշման առանձնահատկություններն ու մեթոդները: Նխդպ., կրտ.դպ., դեռահասների և պատանիների հոգեախտորոշման առանձնահատկությունները և թեստերը: Ձախլիկ, տագնապախռով, գերակտիվ, աուտիկ, արգելակված, ինդիգո և օժտված երեխաների, <<դժվար>> դեռահասների բնութագիրը, նրանց ախտորոշումը: **Թեմա 13.** Մեծահասակների և միջանձնային հարաբերությունների հոգեախտորոշում: Մեծահասակների հոգեախտորոշման առանձնահատկությունները: Ծնող-երեխա հարաբերությունների ախտորոշման հարցարաններ, երեխաների նկատմամբ ծնողական վերաբերմունքի, ընտանեկան փոխհարաբերությունների վերլուծության հարցարաններ, PARI հարցարան, ամուսնական հարաբերությունների ախտորոշման հարցարան: **Թեմա 14.** Հոգեկան վիճակների ախտորոշում: Դեպրեսիայի, ապաթիայի, էյզորիայի, օբսեսիվ-կոմպուլսիաների, վախի, քլեպտոմանիայի ախտորոշում: **Թեմա 15.** Հոգեկան վիճակների կարգավորման մեթոդներ: Հոգեբանի աշխատասենյակը որպես նյարդահոգեկան առողջության կանխարգելիչ միջոց: Գույնի ազդեցությունը մարդու վրա: Երաժշտությունը որպես ռեաբիլիտացիայի միջոց: Բուսականությունը, նկարները, գրքերը որպես հոգեթերապևտիկ միջոցներ, նրանց ճիշտ ընտրությունն ու ազդեցությունը մարդու վրա: **Թեմա 16.** Հոգեբանի աշխատանքի բարոյաէթիկական խնդիրները: Հոգեախտորոշման մեթոդիկաների հեղինակների առջև դրված պահանջներն ու սկզբունքները: **Թեմա 17.** Հոգեբանի իրավունքները, աշխատանքի կազմակերպումը, սկզբունքների և կանոնների բովանդակությունը: Հոգեբանի իրավունքները: Հոգեբանի աշխատանքի կազմակերպումը: Հոգեբանական գործունեության սուբյեկտներն ու օբյեկտները, նրանց հարաբերությունները: Հոգեբանի աշխատանքի էթիկան, աշխատանքի սկզբունքները:

Հ/բ-0310 Առցիլական հոգեբանություն – 6 կրեդիտ

Դասախոսություն –44 ժամ, սեմինար - 44ժամ, (շաբաթական 6 ժամ)

5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Ուսանողներին զինել սոցիալ-հոգեբանական գիտելիքներով, որոնք հետագայում անհրաժեշտ կլինեն իրենց մասնագիտական գործունեության մեջ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կտիրապետի սոցիալական հոգեբանության հետազոտության մեթոդներին,
- կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը

Թեմա 1. Սոցիալական հոգեբանության տեղը այլ գիտակարգերի համակարգում:

Թեմա 2. Սոցիալ-հոգեբանական մտքի ձևավորման պատմությունը: **Թեմա 3.**

Սոցիալ-հոգեբանական հետազոտությունների մեթոդաբանական հիմքերը: **Թեմա**

4. Հասարակական և միջանձնային հարաբերություններ: **Թեմա 5.** Հաղորդակցման

կոնունիկատիվ կողմը: **Թեմա 6.** Հաղորդակցման ինտերակտիվ կողմը: **Թեմա 7.**

Հաղորդակցման պերցեպտիվ կողմը: **Թեմա 8.** Խմբերի սոցիալ-հոգեբանական

առանձնահատկությունները: **Թեմա 9.** Մեծսոցիալական խմբեր: **Թեմա 10.**

Տարերային խմբեր և սոցիալական շարժումներ: **Թեմա 11.** ճոքր խմբերի սոցիալ-

հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 12.** ճոքր խմբում դինամիկ

գործընթացների ընդհանուր բնութագիրը: **Թեմա 13.** Միջխմբային

հարաբերություններ: **Թեմա 14.** Անձի սոցիալական հոգեբանություն: **Թեմա 15.**

Սոցիալականացում, սոցիալականացման փուլերն ու ինստիտուտները: **Թեմա 16.**

Սոցիալական դիրքորոշում:

Յ/բ-0302 Տարիքային հոգեբանություն –5 կրեդիտ

Դասախոսություն –32 ժամ, գործնական - 40 ժամ, (շաբաթական 4 ժամ) 4-րդ կիսամյակ, քննություն Նպատակը.

Ուսանողներին զինել գիտելիքներով, որոնց օգնությամբ նրանք կկարողանան տարիքային հոգեբանության հիմնահարցերին և առաջացած խնդիրներին տալ մասնագիտական ,հոգեբանական լուծումներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կտիրապետի տարիքային հոգեբանության հետազոտության մեթոդներին,
- կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը

Թեմա 1. Տարիքային հոգեբանության առարկան, խնդիրները, մեթոդները: **Թեմա 2.** Տարիքային հոգեբանության` որպես գիտության ծագումն ու զարգացումը: **Թեմա 3.** Հոգեկանի զարգացման տեսությունները: **Թեմա 4.** Հոգեկանի զարգացման օրինաչափություններն ու դինամիկան և անձի ձևավորումն օնտոգենեզում: **Թեմա 5.** Երեխայի հոգեկան զարգացումը մինչև դպրոց հաճախելը:Պերինատալ հոգեբանություն:Հոգեկան զարգացումը նորածնության շրջանում: **Թեմա 6.** Երեխայի հոգեկան զարգացումը մանկիկային տարիքում: **Թեմա 7.** Վաղ մանկական տարիքի հոգեկան զարգացման առանձնահատկությունները: **Թեմա 8.** Հոգեկան զարգացումը նախադպրոցական տարիքում **Թեմա 9.** Անձի ձևավորումը և հոգեկան զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում: **Թեմա 10.** Անձի ձևավորման և զարգացման հոգեբանական առանձնահատկությունները դեռահասության տարիքում: **Թեմա 11.** Անձի ձևավորման և զարգացման հոգեբանական առանձնահատկությունները պատանեկության տարիքում: **Թեմա 12.** Հասուն տարիքի հոգեբանություն: **Թեմա 13.** Հերոնտոհոգեբանություն

Մ/բ- 1102 Մանկավարժություն - 4 կրեդիտ

դասախոսություն-30 ժամ, գործնական պարապմունք- 30 ժամ (Շաբաթական 4 ժամ) 5-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը

Դասընթացի նպատակն է ապագա ուսուցիչներին զինել մանկավարժական գիտելիքներով, ձևավորել որոշակի կարողություններ ու հմտություններ, ինչպես նաև տալ պատկերացումներ մանկավարժական գործընթացի, օրինաչափությունների, ուսուցման ու դաստիարակության սկզբունքների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա վերլուծել մանկավարժական գործընթացը
- իր տեսական գիտելիքները կհամադրի առաջավոր մանկավարժական փորձի, համագործակցության, մանկավարժության դրական նվաճումների հետ:

Բովանդակությունը

Թեմա 1. Մանկավարժի մասնագիտության բնութագիրը: **Թեմա 2.** Մանկավարժության օբյեկտը, առարկան և խնդիրները: **Թեմա 3.** Մանկավարժության կապն այլ գիտությունների հետ: **Թեմա 4.** Անձնավորության դաստիարակությունը, զարգացումը և ձևավորումը: **Թեմա 5.** Դաստիարակության նպատակը և խնդիրները : **Թեմա 6.** Ուսուցման գործընթացի էությունը: **Թեմա 7.** Ուսուցման մեթոդները **Թեմա 8.** Դաստիարակության գործընթացի էությունը: **Թեմա 9.** Դաստիարակության մեթոդները: **Թեմա 10.** Դպրոցավարության հիմունքներ

Յ/բ-1160 Սոցիոլոգիայի և սոց. աշխատանքի հիմունքներ –4 կրեդիտ

Դասախոսություն –30 ժամ, սեմինար - 30 ժամ,

5-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների շրջանում գիտելիքներ ձևավորել սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանական, մեթոդական հիմքերի և առանձնահատկությունների, ընթացակարգի, ինչպես նաև՝ սոցիալական աշխատանքի ընդհանուր տեխնոլոգիաների և մեթոդների վերաբերյալ: Դասընթացի

ուսումնասիրման արդյունքում ուսանողը կկարողանա կոնկրետ հիմնախնդրի հետ կապված հետազոտություններ նախագծել և իրականացնել:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

➤ **ԳԻՏԵՆԱ՝**

Սոցիոլոգիայի դերը սոցիալական աշխատանքի գործունեության արդյունավետ կազմակերպման գործում:

➤ **ԿԱՐՈՂԱՆԱ՝**

Կազմակերպել սոցիալական աշխատանքի գործունեության արդյունավետության գնահատմանն ուղղված սոցիոլոգիական հետազոտություն:

➤ **ՏԻՐԱՊԵՏԻ՝**

Սոցիալական աշխատանքի սոցիոլոգիական հետազոտման հիմնական մեթոդներին, գործիքների մշակման ձևերին, վերլուծության հիմնական եղանակներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Սոցիոլոգիական հետազոտություն. 1.1.Տեսակները, քանակական և որակական հետազոտություն, հիմնական տարբերությունները, առանձնահատկությունները: 1.2.Սոցիալական փաստ, ժամանակի և տարածության խնդիր: 1.3. Մեթոդաբանություն: Մեթոդ, տեխնիկա, ընթացակարգ: **Թեմա 2՝** Սոցիոլոգիական հետազոտության ծրագիր. 2.1.Հետազոտության ծրագրի մշակում. պրոբլեմային իրավիճակի նախնական քննություն, ծրագրի մեթոդաբանական մաս. պրոբլեմի սահմանում և հիմնավորում, հետազոտության նպատակ, խնդիրներ, օբյեկտ, առարկա, հիպոթեզներ, հիմնական հասկացությունների սահմանում, (կոնցեպտուալիզացիա և օպերացիոնալիզացիա), ծրագրի մեթոդական մաս. ընտրանքի սահմանում, առաջնային ինֆորմացիայի ստացման մեթոդի հիմնավորում: 2.2. Հետազոտության պլանի մշակում: 2.3. Գործիքավորում: 2.4.Ինֆորմացիայի վերլուծության մեթոդիկա, ընտրության հիմնավորում: 2.5. Աշխատանքային պլանի մշակում: **Թեմա 3՝** Չափման խնդիրը սոցիոլոգիական հետազոտություններում. 3.1.Սոցիալական բնութագրիչների առաջնային չափում:

3.2. Չափման էտալոնի որոշման հիմնական փուլերը: 3.3. Առաջնային չափման հուսալիությունը: 3.4. Սանդղակների հիմնական տեսակները: **Թեմա 4`** Ընտրանքը սոցիոլոգիական հետազոտություններում. 4.1. Էությունը, գլխավոր և ընտրանքային համախմբություն, ընտրանքային համախմբության կազման միջոցներ և եղանակներ, ներկայացուցչականության խնդիրը, ընտրանքային միավոր, դիտարկման միավոր, ընտրանքային սխալ: 4.2. Ընտրանքի հիմնական տեսակներ: **Թեմա 5`** Սոցիոլոգիական հետազոտության մեթոդներ. 5.1. Դիտարկման մեթոդ. Էությունը, ընթացակարգը, տեսակները: 5.2. Փաստաթղթերի վերլուծության մեթոդ. Փաստաթղթերի բնութագիրը և տեսակները, փաստաթղթերի վերլուծության մեթոդների առավելություններն ու սահմանափակումները, փաստաթղթերի հավաստիության գնահատում, փաստաթղթերի վերլուծության որակական և բովանդակային մեթոդներ: 5.3. Գիտափորձի մեթոդ. Էությունը, տեսակները, կիրառելիությունը, առանձնահատկությունները, գործիքավորումը, չափանիշների խնդիրը էքսպերիմենտալ խմբերի կազման գործում: 5.4. Հարցման մեթոդ. Էությունը, տեսակները, առանձնահատկությունները, Հարցաթերթիկային հարցում. կազման տրամաբանությունը, հարցի տեսակներ, հարցազուցավարի առջև դրվող պահանջներ: Հարցազրույց. Տեսակները, առանձնահատկությունները, կիրառելիությունը, ընթացակարգը և տեխնիկան: Խմբային հարցազրույցի մեթոդներ: **Թեմա 6`** Սոցիալական աշխատանքի տեխնոլոգիաներ. 6.1. Տեսական հիմքեր: 6.2. Սոցիալական աշխատանքի տեխնոլոգիաների Էությունը, տիպաբանությունը, դասակարգումը: 6.3. Սոցիալական աշխատանքի ընդհանուր տեխնոլոգիաներ. Սոցիալական ախտորոշում, փորձաքննություն, սոցիալական կանխատեսման տեխնոլոգիաներ: Սոցիալական հարաբերությունների և կառուցվածքների մոդելավորում: 6.4. Սոցիալական աշխատանքի միջառարկայական տեխնոլոգիաներ. Հիմնական տեսակները: 6.5. Սոցիալական աշխատանքի կոնկրետ տեխնոլոգիաներ. Աշխատանք ընտանիքի, կանանց, հաշմանդամների, փախստականների, երեխաների, անչափահասների, երիտասարդների, տարեցների, ազգային փոքրամասնությունների, իրավախախտների, միգրատների հետ: **Թեմա 7`** Սոցիալական աշխատանքի մեթոդներ. 7.1. Դասակարգման խնդիրը: 7.2. Սոց.աշխատանքի մեթոդները ըստ ուղղությունների. Կազմակերպչական, սոցիոլոգիական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավաժական, սոցիալ-

բժշկական, սոցիալ-տնտեսական: 7.3. Սոց.աշխատանքի մեթոդները ըստ օբյեկտի. Անհատական, խմբային, համայնքային:

Յ/բ-1161 Բժշկական հոգեբանություն – 5 կրեդիտ

Դասախոսություն – 32 ժամ, սեմինար – 46 ժամ (շաբաթական 3 ժամ)

6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Ծանոթացնել ուսանողներին բժշկական հոգեբանության առարկային, ճյուղերին (նեյրոհոգեբանություն, պաթոհոգեբանություն, հոգեսոմատիկա), յուրահատուկ մեթոդներին, հոգեկան խանգարումների հիմնական դասակարգումներին: Առարկայի նպատակն է նաև բացահայտել հիվանդությունների առաջացման, ախտորոշման, կանխարգելման և բուժման հարցերում հոգեբանական գիտելիքների կիրառման հնարավորությունը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա կիրառել հոգեկան խախտումների ախտորոշման մեթոդիկաները;
- կկարողանա մեկնաբանել ստացված տվյալները՝ դրված խնդրին համապատասխան;
- կտիրապետի ժամանակակից բժշկական հոգեբանության հետազոտման մեթոդներին, դրանց կիրառմանը՝ հոգեախտաբանական հետազոտման խնդիրներին համապատասխան;
- կտիրապետի երեխաների հոգեկան զարգացման անոմալիաների հոգեբանական ախտորոշմանը, հոգեթերապևտիկ զրույցին՝ որպես շփման արվեստի, ինչպես նաև հոգեախտորոշիչ մեթոդիկաների կիրառմանն ու վերծանմանը;
- կտիրապետի տարբեր տարիքի երեխաների և նրանց ծնողների հետ խորհրդատվական և հոգեշտկողական աշխատանքին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ներածություն: **Թեմա 2.** Բժշկական հոգեբանության հիմնական ճյուղերը:

Ձեմա 3. Բժշկական հոգեբանության մեթոդները: **Ձեմա 4.** Հոգեկան գործունեության խախտումների հոգեբանական մեխանիզմները: **Ձեմա 5.** Ջառանգանքային ընկալում, աշխարհի պատկերի ախավախում: **Ձեմա 6.** Մտածական գործունեության խախտումներ: **Ձեմա 7.** Գիտակցության խանգարումներ: **Ձեմա 8.** Հիշողության և ինտելեկտի խանգարումներ: **Ձեմա 9.** Հուզականային ոլորտի խանգարումներ: **Ձեմա 10.** Հոգեպրոֆիլակտիկայի կազմակերպումը և մշակումը:

Հ/մ-1138 Կազմակերպչական հոգեբանություն - 5 կրեդիտ

Դասախոսություն- 32 ժամ, գործնական - 46 ժամ

6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Ուսանողներին զինել գիտելիքներով կազմակերպչական վարքի և կառավարման վերաբերյալ: Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական, կիրառական և մեթոդական գիտելիքները: Հոգեբանության բնագավառում ձեռք բերած գիտելիքներն և ունակությունները կիրառել պրակտիկ գործունեության մեջ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Պետք է կարողանա

- ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կիրառել հետազոտության մեթոդները, իրականացնել ախտորոշում և շտկում,
- որոշ գիտական և գործնական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:
- առարկայի ուսումնասիրման ժամանակ գիտելիքների կիրառական նշանակության ամրապնդման նպատակով ուսանողները պետք է կարողանան ռեալ պատկերացնել առարկայի կարևորությունը, նրա տեսական և պրակտիկ հայեցակերպերը:

Բովանդակությունը.

Ձեմա 1. Կազմակերպչական հոգեբանության առարկան, խնդիրները **Ձեմա 2.**

Կազմակերպչական հոգեբանության կապը այլ գիտությունների հետ: **Ձեմա 3.**

Մարդկային վարքի և անձնային բնութագրերի վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումները **Թեմա 4**. Կազմակերպության մեջ անձնակազմի դրդապատճառները և արդյունավետությունը **Թեմա 5**. Աշխատուժի ֆիզիոլոգիական վիճակները և նրա ազդեցությունը կազմակերպության արդյունավետության վրա: **Թեմա 6**. Լիդերությունը և Ղեկավարությունը կազմակերպությունում: **Թեմա 7**. Կազմակերպչական կյանքի փուլերը, մոդելները: **Թեմա 8**. Կազմակերպության կառավարումը նորամուծություններով **Թեմա 9**. Կազմակերպչական մշակույթ: **Թեմա 10**. Միջանձնային հարաբերությունները կազմակերպության մեջ: **Թեմա 11** Կոնֆլիկտները կազմակերպությունում և դրանց համգուծալուծման ուղիները:

Յ/բ-1162 Հոգեբանության դասավանդման մեթոդիկա - 6 կրեդիտ
Դասախոսություն - 36 ժամ, գործնական - 36 ժամ,
7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է դասախոսի և ուսանողի համատեղ գործունեության բազմազան ձևերի, համագործակցության ապահովում: Նպաստել մասնագիտական գործունեության կարողությունների ձևավորմանը, ապագա մասնագետների մանկավարժական ուղղվածության ունակությունների զարգացմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կտիրապետի հոգեբանական հետազոտության մեթոդներին,
- կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ,

Բովանդակությունը.

Թեմա 1` Հոգեբանությունը որպես գիտական աշխարհաճանաչման կարևորագույն ոլորտ: <<Հոգեբանության դասավանդման մեթոդիկա>> դասընթացի առարկան, խնդիրները: Հոգեբանության կողմից ուսումնասիրվող հոգեկան երևույթները:Հոգեբանական իմացության առանձնահատկությունները: Դասընթացի խնդիրները: **Թեմա 2** Հոգեբանական կրթության նպատակն ու խնդիրները

մասնագիտական կրթության ժամանակակից ռազմավարության ներքո: Զոգեբանական բնույթի ուսումնական դասընթացները պայմանականորեն դասակարգումները: **Թեմա 3`** Զոգեբանական կրթության արդի հիմնախնդիրները, ուսուցման առանձնահատկությունները տարբեր կրթական հաստատություններում: Կրթության կազմակերպման ավանդական և ժամանակակից ռազմավարությունների հոգեբանական տարբերությունները: **Թեմա 4`** Զոգեբանական կրթության բովանդակությունը: Ուսումնական առարկայի բաղադրիչները: **Թեմա 5`** Մասնագիտական կրթության ժամանակակից տեխնոլոգիաների ընդհանուր բնութագիրը, դրանց արդյունավետության հիմնական ցուցանիշները: Մասնագիտական գործունեության ձևավորման տեխնոլոգիաները: **Թեմա 6`** Մասնագիտական կրթության ժամանակակից տեխնոլոգիաների ընդհանուր բնութագիրը, դրանց արդյունավետության հիմնական ցուցանիշները: **Թեմա 7`** Մանկավարժական հաղորդակցումը ուսումնական գործընթացի շրջանակներում: Մանկավարժական հաղորդակցման ձևերը և դերերը (ձևական, միջխմբային, միջանձնային, անհատական): **Թեմա 8`** Մասնագիտական համագործակցության կազմակերպումը բարձրագույն ուսումնական հաստատությունում: Համագործակցության ժամանակակից ձևերը: **Թեմա 9`** Զոգեբանության ուսումնական դասընթացների բովանդակության մշակման առանձնահատկությունները, ժամանակակից մոտեցումները: **Թեմա 10`** Զոգեբանության դասավանդման մեթոդները: Բարձրագույն ուսումնական հաստատությունում դասավանդվող ծրագրերը, դրանց մշակման եղանակները, մոդուլները, բաղադրիչները: **Թեմա 11`** Զոգեբանության դասախոսությունների, սեմինարների, գործնական և լաբորատոր պարապմունքների կազմակերպման մեթոդական առանձնահատկությունները: **Թեմա 12`** Մասնագիտական գիտելիքների, կարողությունների ստուգման և գնահատման առանձնահատկությունները: Ուսուցումը իրականացնողների հիմնական գործառույթները: Ստուգման և գնահատման նոր մոտեցումները: **Թեմա 13** Ուսումնական գործընթացի վերահսկման և կառավարման մոտեցումները: **Թեմա 14** Մասնագիտական գիտելիքների, կարողությունների ստուգման և գնահատման հատկություննահատման ներքո: **Թեմա 15** Դասավանդողի հոգեբանություն: Զոգեբանության դասախոսի անձնային որակները,

մասնագիտական գործունեության առանձնահատկությունները: Հոգեբանության դասախոսի դերային դիրքորոշումները: մանկավարժական հաղորդակցման ոճերը: **Ձեռնա 16** Հոգեկան գործընթացների դասավանդման ժամանակակից մոտեցումները: **Ձեռնա 17** Անհատական հոգեբանական առանձնահատկությունների դասավանդման մեթոդները: **Ձեռնա 18** Խաղային դիդակտիկ սցենարների կիրառման մեթոդական առանձնահատկությունները հոգեբանության դասավանդման ընթացքում:

Հ/բ-1163 Իրավաբանական հոգեբանություն և փորձաքննություն–6 կրեդիտ Դասախոսություն – 36 ժամ, սեմինար - 36 ժամ, (շաբաթական 5 ժամ) 7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել իրավաբանական հոգեբանության առարկան, խնդիրները, քննարկել իրավաբանական տարբեր կառույցների հոգեբանական յուրահատկությունները, տալ անչափահասների հոգեբանական բնութագիրը և հանցագործության դրդապատճառները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա իրավաբանական հոգեբանության հիմնական խնդրացանկը, հանցագործության ծագման և հանցագործ անձի ձևավորման հոգեբանական նախադրյալներն ու օրինաչափությունները, հանցագործությունների կանխարգելման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, իրավաբանական գործունեության սոցիալ- հոգեբանական պատրաստվածության առանձնահատկությունները, դատահոգեբանական փորձաքննությունների պրակտիկայի ժամանակակից առանձնահատկությունները:

Կկարողանա մեկնաբանել անձի քրեածին և հանցածին վարքի ձևավորման, զարգացման և դրսևորման հոգեբանական մեխանիզմները, անձի քրեականացան օրինաչափությունները, ձևավորել և զարգացնել կարողություններ ստացված

հոգեբանական գիտելիքները իրավաբանական գործունեության մեջ կիրառելու համար, ուսումնասիրել անձի բարոյագիտակցության և իրավագիտակցության ձևավորման հոգեբանական պայմանները և գործոնները, դիտարկել անձի սոցիալիզացիայի գործընթացը անբարենպաստ հոգեբանական պայմանների ազդեցության ներքո, ձևավորել գիտելիքների համակարգ հանցավոր վարքի հոգեբանական խնդիրների և դրա կանխարգելման մասին, ձևավորել հարցադրումներ դատահոգեբանական փորձաքննությունների հետ կապված:

Բովանդակությունը

Թեմա 1` Իրավաբանական հոգեբանության առարկան, խնդիրները, համակարգը: Իրավաբանական հոգեբանության մեթոդները: **Թեմա 2`** Իրավաբանական հոգեբանության զարգացումը: **Թեմա 3`** Քրեական դատավարության հոգեբանությունը: Դատավարության մասնակիցների հոգեբանությունը: **Թեմա 4`** Ապացուցման, քննչական և դատական գործունեության կազմակերպման և պլանավորման հոգեբանական հիմունքները: Առանձին դատավարական գործողությունների հոգեբանությունը: **Թեմա 5`** Անչափահասների հոգեբանությունը: Անչափահասների հիմնահարցը իրավաբանական հոգեբանության մեջ: Անչափահասների քննության հոգեբանական առաձեռնահատկությունները: **Թեմա 6`** Առանձին դատավարական գործունեության հոգեբանությունը: **Թեմա 7`** Դատահոգեբանական փորձաքննության տեսակները: Դատահոգեբանական փորձաքննություն: **Թեմա 8`** Դատահոգեբանական փորձաքննություն: Դատահոգեբանական փորձաքննության նպատակները և խնդիրները: **Թեմա 9`** Ուղղիչ աշխատանքային (պենիցիտար) հոգեբանության առարկան և խնդիրները: **Թեմա 10`** Ուղղման և վերադաստիարակման հիմնական միջոցների հոգեբանական բնութագիրը: Ռեսոցիալիզացիայի հարցերը և ադապտացիան նորմալ սոցիալական միջավայրում:

Յ/բ-0316 Կոնֆլիկտի հոգեբանություն–6կրեդիտ

Դասախոսություն –36 ժամ, սեմինար - 36ժամ, (շաբաթական 4ժամ)

7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Ուսանողին ծանոթացնել կոնֆլիկտաբանության առարկային, խնդիրներին, քննարկել կոնֆլիկտի ֆենոմենը ներանձնային, միջանձնային, միջխմբային և սակարգակներում, փորձել տալ դրանց լուծման ձևեր ու եղանակներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա կոնֆլիկտի առաջացման ուղեքարտի օրինակաչափությունները,
- ծանոթ կլինի կոնֆլիկտը դիտարկող հիմնական տեսություններին,
- կկարողանա հոգեբանորեն վերլուծել կոնֆլիկտային իրադրությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կոնֆլիկտաբանության մտքերի ձևավորման նախադրյալները:

Թեմա 2. Հետազոտության մեթոդները և բախումների ախտորոշումը:

Թեմա 3. Կոնֆլիկտների տեսության հիմունքները: **Թեմա 4.** Ներանձնային

կոնֆլիկտներ: **Թեմա 5.** Միջանձնային կոնֆլիկտներ: **Թեմա 6.** Կոնֆլիկտները

կազմակերպություններում: **Թեմա 7.** Միջխմբային կոնֆլիկտներ: **Թեմա**

8. Կոնֆլիկտների նախազգուշացման հիմունքները: **Թեմա 9.** Կոնֆլիկտների վերացման տեսությունը և պրակտիկան:

Հ/բ-1164 Ինքնակարգավորման հիմունքները - Ճկրեդիտ

Դասախոսություն – 36 ժամ, սեմինար – 36 (ժամ)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Նպատակն է ուսանողների մոտ ձևավորել ինքնաուսումնասիրման և սեփական անձին անհրաժեշտության դեպքում օգնելու մոտիվացիա:

Կրթական վերջնարդյունքներ.

- ցուցաբերել ինքնակարգավորման մեթոդների և մեխանիզմների իմացություն,
- իրականացնել աուտոգեն մարզումներ,
- տիրապետել հոգեկան վիճակների կարգավորմանն ուղղված հնարքներին:

Բովանդակություն

Թեմա 1 Ինքնակարգավորման հիմունքները, նպատակը, խնդիրները: Ինքնակարգավորման էությունը, կառուցվածքը: **Թեմա 2** Ինքնակարգավորում հասկացությունը խորհրդային և արտասահմանյան հոգեբանության մեջ: Կոնոպկինի, Ջեյգարնիկի, Վասիլյուկի և այլոց մոտեցումները իֆքնակարգավորման մասին: **Թեմա 3** Ինքնակարգավորման սկզբունքները: Գրադիենտի, կարգավորման ուրվագծի փակվածության, կանխագուշակմա, ամբողջականության սկզբունքներ: Հասկացություններ գոմեոստազի և գոմեոկինեզի մասին: **Թեմա 4** Ինքնակարգավորման եղանակները, մեխանիզմներն ու մակարդակները: Բնական եղանակներ, եղանակներ կապված շնչառության, շարժումների, խոսքի հետ: Հանգստի, վերականգման, ակտիվացման էֆեկտներ: **Թեմա 5** Ինքնակարգավորման տեսակները: Աուտորեգուլյար և գիտակցված ինքնակարգավորում: **Թեմա 6** Ինքնակարգավորման մեթոդները: Ներշնչանք: Ռելաքսացիա: Աուտոգեն մարզում: Դեսենսիբիլիզացիա: Մեդիտացիա: **Թեմա 7** Հոգեկան ինքնակարգավորում: Հոգեկան ինքնակարգավորման էությունը, եղանակներն ու վերջնարդյունքը: **Թեմա 8** Ինքնակարգավորում և հոգեկան առողջություն: Հոգեկան առողջության չափորոշիչները: Երկարակեցության հոգեբանական գործոնները: **Թեմա 9** Հոգեկան ինքնակարգավորման դերը առողջության պահպանման գործում: Հոգեկան ինքնակարգավորման մակարդակները ըստ Գրիմակի: **Թեմա 10** Անձի ինքնակարգավորում: Ինքնակարգավորման կապը ինքնագնահատականի հետ: Մոտիվացիոն, հուզականային ոլորտների, ճանաչողական գործընթացների և խոսքի դերը ինքնակարգավորման գործում: **Թեմա 11** Հոգեկան վիճակների

ինքնակարգավորում: Հասկացություն հոգեկան վիճակների մասին: Հոգեկան վիճակների դասակարգումը: Վիճակների կարգավորման ընդհանուր սկզբունքներ: **Թեմա 12** Սթրեսի ինքնակարգավորում: Սթրեսը և ինքնակարգավորումը: Սթրեսի հաղթահարման մեթոդները: **Թեմա 13** Վարքի ինքնակարգավորում: Ռեֆլեքսի դերը ինքնակարգավորման մեջ: Ոճային ինքնակարգավորում: **Թեմա 14** Ինքնակարգավորում և ինքնավերահսկում: Ինքնակարգավորում և ինքնավերահսկում հասկացությունների տարբերությունը: **Թեմա 15** Ինքնակարգավորման ոչ ավանդական մեթոդներ: Արթերապիա: Արոմաթերապիա: Գունաթերապիա: Երաժշտաթերապիա: Իպոթերապիա:

Յ/բ-0318 Հոգեբանական խորհրդատվություն–4 կրեդիտ

Դասախոսություն –32 ժամ, սեմինար - 30 ժամ, (շաբաթական 4 ժամ) 6-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

- ուսանողների մոտ ստեղծել հոգեբանական խորհրդատվության ընթացքի, բովանդակության, ուղղությունների և ձևերի մասին ամբողջական պատկերացում.
- ապահովել ուսուցման տեսական և գործնական դասընթացների սերտ կապը.
- նպաստել ուսանողների մոտ հոգեբանական խորհրդատվության հմտությունների ձևավորմանը.
- պայմաններ ստեղծել ամեն մի ուսանողի մոտ խորհրդատվության իր մասնագիտական ոճի ձևավորման, հնարավորությունների գիտակցման և մասնագիտական աճի համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

- հոգեբանական խորհրդատվության սահմանումը,
- հոգեբանական խորհրդատվության առարկան,
- հոգեբանական խորհրդատվության հիմնական մեթոդները,

- հոգեբանական խորհրդատվության կողմից լուծվող հիմնական խնդիրները,
- հոգեբանական խորհրդատվության դերը հասարակական զարգացման և մանկավարժական գործունեության ոլորտում,
- հոգեբանական խորհրդատվության տեսությունները,
- հոգեբանական խորհրդատվության տեխնիկաները,
- հոգեբանական խորհրդատվության ուղղությունները,

Կկարողանա

- ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կիրառել ընդհանուր հոգեբանության հետազոտության մեթոդները,
- որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Կտիրապետի

- հոգեբանական խորհրդատվության առարկային, մեթոդներին և խնդիրներին:
- հոգեբանական խորհրդատվության ժամանակակից ուղղություններում ընդունված անձի կառուցվածքի վերաբերյալ գիտելիքների, աշխատանքի ձևերի, խորհրդատվություն վարելու ժամանակ յուրաքանչյուր ներկայացված ուղղվածության առանձնահատկությունների վերաբերյալ պատկերացում;
- աշխատանքի գործնական տեխնոլոգիաների, որոնք կաջակցեն ուսանողի մասնագիտական մակարդակի բարձրացմանը և իր գործունեության ոլորտի լայնացմանը;
- հոգեբանության յուրաքանչյուր ուղղությանը հատուկ տեսական մոտեցումներին;
- ամեն մի տեսական մոտեցման սահմաններում օգտագործվող աշխատանքային տեխնիկաներին:

Բովանդակությունը

Թեմա 1 Խորհրդատվության պատմություն: **Թեմա 2** Խորհրդատվության տեսական եւ մեթոդա-բանական հիմքերը: **Թեմա 3** Հոգեբանական խորհրդատվության նպատակները և խնդիրները: **Թեմա 4** Հոգեբանական խորհրդատվության նպատակները և խնդիրները: Խորհրդատվության կառուցվածքը: **Թեմա 5** Հարցազրույց(ինտերվյու) որպես հոգեբանական խորհրդատվության հիմնական մեթոդ: **Թեմա 6** Հոգեբանական խորհրդատվության բարոյական կողմերը: **Թեմա 7** Հոգեբանական խորհրդատվության ընթացքը, փուլերը: **Թեմա 8** Հարցազրույցի տեսակները, արդյունքների գնահատում: **Թեմա 9** Առաջնային հարցազրույցի առանձնահատկությունները: **Թեմա 10** Խորհրդատվության ավարտը, ետխորհրդատվական ընթացքը: **Թեմա 11** Հիմնական խորհրդատվական մոտեցումներ: Դասական հոգեվերլուծություն: **Թեմա 12** Խորքային հոգեբանություն: **Թեմա 13** Խորհրդատվությունը ըստ Ադլերի: **Թեմա 14** Հումանիստական ուղղությունը ըստ Կ. Ռոջերսի: **Թեմա 15** Գեշտալտ հոգեբանություն: **Թեմա 16** Տրանսակտային վերլուծություն: **Թեմա 17** Նեյրոլինգվիստիկական ծրագրավորում: **Թեմա 18** Բիհեյվորիստական ուղղություն: **Թեմա 19** Անհատական և խմբային խորհրդատվություն:

Յ/բ-1165 Կրթության հոգեբանություն - 3 կրեդիտ

Դասախոսություն - 28 ժամ, գործնական -24 ժամ

8-րդ կիսամյակ, ստուգաթղթ

Նպատակը.

Առարկայի դասավանդման ընթացքում ուսանողներին սովորեցնել մարդուն դիտարկել որպես աշխատանքի սուբյեկտ, բացահայտել աշխատանքային գործունեության համար աշխատողից պահանջվող անհատական-տիպական հատկանիշների կառուցվածքը, աշխատանքում առաջացող հոգեվիճակների և դրանց փոփոխությունների օրինաչափությունները և մեխանիզմները, հաղորդակցման առանձնահատկությունները աշխատանքի գործընթացում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,

- կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ,
 - կկարողանա վերլուծության ենթարկել կրթական գործընթացների վերաբերյալ տեսություններն ու դրույթները,
 - կհմանա կրթական գործընթացների արդի հիմնախնդիրները,
 - կհասկանա կառուցվածքային մոտեցումները, մեթոդաբանության տրամաբանությունը:
-
- կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
 - կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ,
 - կկարողանա առանձնացնել աշխատողների մասնագիտական ընտրության, պատրաստման և ուսուցման հիմնական կողմերը,
 - կհմանա աշխատանքային դրդապատճառների բացահայտման եղանակները,
 - կառանձնացնի մասնագիտական սթրեսների և մասնագիտական հիվանդությունների արդի հիմնախնդիրները,
 - կկարողանա ախտորոշել մասնագիտական ընդունակությունների կառուցվածքային առանձնահատկությունները:

Բովանդակություն

Թեմա 1` Կրթությունը որպես համակարգ և գործընթաց **Թեմա 2:** Ուսուցում և զարգացում: Ջարգացնող ուսուցում **Թեմա 3`** Կրթական գործընթացի սուբյեկտները` մանկավարժ և սովորող: **Թեմա 4`** Ուսումնական գործունեության ընդհանուր կառուցվածքը և բնութագիրը: Ուսումնական մոտիվացիա: **Թեմա 5`** Ուսումնական գործունեության սուբյեկտի տարիքային առանձնահատկությունները: **Թեմա 6`** Մանկավարժական գործունեության բնութագիրը, ձևերը, հիմնական գործառույթները: **Թեմա 7`** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթական համակարգը: **Թեմա 8`** Կրթության առանձնահատուկ կարիքների սահմանումը: **Թեմա 9`** Խոսքի, լսողության, տեսողության խնդիրներ ունեցող երեխաների կրթությունը: **Թեմա 10`** Ստավոր հետամնացություն ունեցող

երեխաների կրթությունը: **Թեմա 11`** Վարքային և հուզական ուղորտի խանգարումներ ունեցող երեխաների կրթություն: **Թեմա 12`** Ուսումնական ունակությունների զարգացման յուրահատուկ տիպի խանգարումներ ունեցողների ուսուցումը:

Յ/մ-1140 Հաղորդակցման հոգեբանություն - 3 կրեդիտ

Դասախոսություն - 28 ժամ, սեմինար - 28 ժամ

5-րդ կիսամյակ , ստուգարք

Նպատակը.

Ուսանողներին զինել գիտելիքներով, որոնց օգնությամբ նրանք կկարողանան տարբերակել մասնագիտական և առօրեական հաղորդակցման տարբերությունները, խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման հմտությունների համարժեք զուգակցման անհրաժեշտությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- Ուսումնասիրած մեթոդները կիրառել պրակտիկայում
- Ժեստերի լեզվի միջոցով կատարել հետազոտություններ
- կարողանան որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Միջանձնային հաղորդակցման ընդհանուր բնութագիրը: **Թեմա 2.** Միջանձնային հաղորդակցման գործընթացի կառուցվածքը, տարրերը և գործառույթները: **Թեմա 3.** Հաղորդակցման տիպերը և տեսակները: **Թեմա 4.** Խոսքի տեսակները: **Թեմա 5.** Արդյունավետ խոսքի հատկությունները և ներկայացվող պահանջները հաղորդակցման կառավարման գործընթացում: **Թեմա 6.** Միջանձնային կրթական հաղորդակցման գաղափարական ակունքները և զարգացումը: **Թեմա 7.** Մանկավարժական հաղորդակման միջոցները: **Թեմա 8.** Միջանձնային հաղորդակցման խոճընդոտները:

Թեմա 9 Վերբալ և ոչ վերբալ հաղորդակցում: **Թեմա 10** Հռետորական ոչ վերբալ միջոցներ: **Թեմա 11** Ոչ վերբալ հաղորդակցում: **Թեմա 12.**Միջանձնային փոխհարաբերություններում կոնֆլիկտի քությունը: **Թեմա 13.** Բախումնային հաղորդակցում: Պատճառները և հաղթահարման ուղիները միջանձնային փոխհարաբերություններում: **Թեմա 14.** Հաղորդակցման ոճերը.Անհատական ոճ: **Թեմա 15.**Սոցիալական և կրթական միջանձնային հաղորդակցությունների մակարդակները: **Թեմա 16.** Կոմունիկացիայի էությունը: **Թեմա 17.** Միջանձնային հաղորդակցություն:

1.4. Հատուկ մասնագիտական կրթամաս

Հ/բ-1166 Շեղվող և ագրեսիվ վարքի հոգեբանություն - 5 կրեդիտ

Դասախոսություն- 32ժամ, գործնական - 46 ժամ

6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացը թույլ է տալիս ուսանողներին ընդհանրացնել իրենց մասնագիտական գիտելիքները, ուսումնասիրել ագրեսիվության վերաբերյալ գոյություն ունեցող տեսությունները, ագրեսիվ և շեղվող վարքի պատճառները, կանխարգելման ուղիները:

Կրթական արդյունքները

Առարկայի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է կարողանա

- ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կիրառել հետազոտության մեթոդները, իրականացնել ախտորոշում և շտկում,
- որոշ գիտական և գործնական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:
- առարկայի ուսումնասիրման ժամանակ գիտելիքների կիրառական նշանակության ամրապնդման նպատակով ուսանողները պետք է

կարողանան ռեալ պատկերացնել առարկայի կարևորությունը, նրա տեսական և պրակտիկ հայեցակերպերը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Անձի ներդաշնակ զարգացման հիմնախնդիրը հոգեբանության մեջ :

Թեմա 2. «Ագրեսիա» և «Ագրեսիվություն» հասկացությունների տարանջատումը, սահմանումը: **Թեմա 3.** Ագրեսիվ վարքի վերաբերյալ գոյություն ունեցող

տեսությունները, համեմատական վերլուծություն **Թեմա 4.** Ագրեսիվ վարքի

դասակարգումը ըստ տարբեր հոգեբանների: **Թեմա 5.** Ագրեսիայի սոցիալական պայմանավորվածությունը և դրսևորման առանձնահատկությունները տարբեր

տարիքային փուլերում: **Թեմա 6.** Ագրեսիայի առաջացման պատճառները,

դրսևորման առանձնահատկությունները: **Թեմա 7.** Շեղվող վարքի

ուսումնասիրության հոգեբանական մոտեցումները **Թեմա 8.** Շեղվող վարքի

ուսումնասիրությունների տեսական հիմքերը և ներկա վիճակը: **Թեմա 9.** Ագրեսիայի

և շեղվող վարքի կանխարգելման ուղիները:

Յ/բ-1167 Սթրեսի կառավարում - 5 կրեդիտ

Դասախոսություն- 32 ժամ, գործնական - 46 ժամ

6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է մասնակիցների մոտ ձևավորել սթրեսի կառավարման հմտություններ:

Դասընթացի մասնակիցները կստանան գիտելիքներ հոգեբանական սթրեսի առանձնահատկությունների, տարատեսակների, փուլերի ու հետևանքների մասին:

Դասընթացի ավարտին յուրաքանչյուր մասնակից կկարողանա տարբերակել սթրեսոզեն իրավիճակները և սթրեսորները, կկարողանա ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն սթրես առաջացնող իրավիճակների նվազեցմանը:

Կրթական արդյունքները

Առարկայի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է կարողանա

- ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կիրառել հետազոտության մեթոդները, իրականացնել ախտորոշում և շտկում,
- որոշ գիտական և գործնական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:
- առարկայի ուսումնասիրման ժամանակ գիտելիքների կիրառական նշանակության անրապնդման նպատակով ուսանողները պետք է կարողանան ռեալ պատկերացնել առարկայի կարևորությունը, նրա տեսական և պրակտիկ հայեցակերպերը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ընդհանուր պատկերացում սթրեսի մասին: **Թեմա 2.** Սթրեսի փուլերը: Տագնապի փուլ, դիմադրության փուլ, սպառնման փուլ: **Թեմա 3.** Սթրեսի տեսակները **Թեմա 4.** Սթրեսագեն գործոններ: Հավանական սթրեսորների ազդման բազմազանությունը **Թեմա 5.** Սթրեսի զարգացումը: **Թեմա 6.** Մարդկանց դասակարգումը ըստ սթրեսադիմացկունության: **Թեմա 7.** Անձի հոգեբանական կառուցվածքը որպես բացասական հոգեվիճակների առաջացման նախապայման: **Թեմա 8.** Անձի սոցիալ-հոգեբանական վարքի դրսևորման փուլերը : **Թեմա 9.** Սթրեսի կարգավորումը: Սթրեսի կանխարգելման և հաղթահարման տեխնիկաները:

Հ/բ-0322 Աշխատանքի հոգեբանություն - 4կրեդիտ

Դասախոսություն - 30 ժամ, գործնական - 30 ժամ

6-րդ կիսամյակ, ստուգաթղթ

Նպատակը.

Ուսանողին տալ գիտելիքներ կրթության կառուցվածքի, ուսումնական և մանկավարժական գործունեության հոգեբանական առանձնահատկությունների, օրինաչափությունների մասին, ներառական կրթության առանձնահատկությունների, հատուկ կարիքներով երեխաների հետ տարվող աշխատանքների մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ,
- կկարողանա առանձնացնել աշխատողների մասնագիտական ընտրության, պատրաստման և ուսուցման հիմնական կողմերը,
- կհմանա աշխատանքային դրդապատճառների բացահայտման եղանակները,
- կառանձնացնի մասնագիտական սթրեսների և մասնագիտական հիվանդությունների արդի հիմնախնդիրները,
- կկարողանա ախտորոշել մասնագիտական ընդունակությունների կառուցվածքային առանձնահատկությունները:

Թեմա 1` Աշխատանքի հոգեբանության առարկան, խնդիրներ, մեթոդները: **Թեմա 2** Աշխատանքի հոգեբանության զարգացման պատմությունը: Աշխատանքը որպես հասարակական երևույթ: **Թեմա 3`** Մարդը որպես աշխատանքի սուբյեկտ: Աշխատանքը և մարդու տիպական անհատական հատկանիշները: **Թեմա 4** Աշխատանքային կարողություններ և հմտություններ: Դրանց ձևավորման առանձնահատկությունները: **Թեմա 5** Աշխատանքային գործունեության արդյունավետության ախտորոշում; խատողի ընդունակությունների կառուցվածքի ախտորոշման ժամանակակից մեթոդները: **Թեմա 6`** Աշխատանքային գործունեության մոտիվացիան: Մոտիվացիային նպաստող գործոնները, դրդապատճառների համաստրադասությունը: **Թեմա 7** Աշխատանքային գործունեությանը հոգեբանորեն պատրասվածության հիմնախնդիրը: Էքստրեմալ և օպտիմալ պայմաններում իրականացվող աշխատանքի հոգեբանական առանձնահատկություններ: **Թեմա 8** Աշխատանքի պայմանները և աշխատողի հոգեվիճակները: Սթրեսներ, ֆրոստրացիաներ: **Թեմա 9** Աշխատանքային գործունեության մեջ հաղորդակցման առանձնահատկությունները: Աշխատանքային կոլեկտի, հոգեբանական բնութագիրը: **Թեմա 10** Միջանձնային փոխհարաբերությունների ախտորոշումը: Մասնագիտական

հեղինակություն: **Թեմա 11** Ինժեներական հոգեբանություն:Նպատակները, ստրատեգիաներ և խնդիրներ:

Յ/մ-0368 Կառավարման հոգեբանություն –4 կրեդիտ
Դասախոսություն –30 ժամ, սեմինար - 30ժամ, (շաբաթական 4ժամ) 6-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել կառավարման հոգեբանության հիմնական խնդիրներին, քննարկել կառավարման գործունեության հոգեբանական առանձնահատկությունները և դրանց կապը տարբեր գործոնների հետ, վերլուծել կառավարիչի անձի հոգեբանական կերպարը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա կառավարման հոգեբանության առարկայի
- խնդրացանկը,
- կտիրապետի կառավարման ոճերին և ազդակարգություններին,
- կկարողանա հոգեբանորեն վերլուծել կառավարչական խնդիրները

Բովանդակությունը

Թեմա 1. Կառավարման հոգեբանության առարկան և խնդիրները, **Թեմա 2.** Կառավարման հոգեբանության կապը այլ գիտությունների հետ: **Թեմա 3.** Կառավարման հոգեբանության ուսումնասիրության մեթոդները: **Թեմա 4.** Կառավարման տեսությունները: **Թեմա 5.** Ղեկավարման ոճերի տեսակները, դրանց կիրառումը և աշխատանքի արդյունավետությունը: **Թեմա 6.** Ղեկավար- ենթակա հարաբերությունները աշխատանքային կոլեկտիվում: **Թեմա 7.** Ղեկավար-լիդերի անձնային որակները:

Յ/Բ-1168 Ստեղծագործության հոգեբանություն –5կրեդիտ

Դասախոսություն –32ժամ, սեմինար - 32ժամ, (շաբաթական 4ժամ)

8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին ստեղծագործական

գործընթացի օրինաչափությունների, ստեղծագործական մտածողության, ստեղծագործության հոգեբանական տերմինոլոգիայի, ստեղծագործ անձի որակների, ստեղծագործականության (կրեատիվության) հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջողավարտին ուսանողը.

- կիմանա հնարավորություն ձեռք բերելու սուլմնասիրել ստեղծագործության մեխանիզմներն ու հիմքերը, մոտիվացիան,
- ծանոթ կլինի ստեղծագործության հոգեբանական վերլուծության ձևերին,
- կկարողանա հասկանալ, թե ինչպես կարելի է ներդաշնակորեն զարգացնել երեխաներին, սեփական հոգևոր կայացման ուղին:

Դասընթացի բովանդակությունը

Թեմա 1. Ստեղծագործական հոգեբանության առարկան, մեթոդները, այլ գիտակարգերի հետ: **Թեմա 2.** Ստեղծագործությունը բացատրող հիմնական տեսությունները: Ստեղծագործության հիմնական ձևերը: **Թեմա 3.** Գիտակցականը, անգիտակցականը, ինկուբացիան և հիմնական ստեղծագործական գործընթացում: **Թեմա 4.** Գեղարվեստական ստեղծագործության հոգեբանությունը: **Թեմա 5.** Գեղարվեստական գործը որպես արվեստի կեցության ձև: Յեմենևոյի կանոնները և մեթոդները: **Թեմա 6.** Գեղարվեստական ստեղծագործության վերլուծության մեթոդաբանական

Ձեռնա 7. Գեղարվեստական ստեղծագործության ձևերը **Ձեռնա 8.** Ստեղծագործ անձի որակները և ստեղծագործական ընդունակությունները: **Ձեռնա 9.** Օժտվածություն: Տաղանդ: Հանճարեղություն: **Ձեռնա 10.** Արվեստը որպես կատարսիս: Արտթերապիա: **Ձեռնա 11.** Անձի տրանսֆորմացիան գեղարվեստական ստեղծագործության մեջ:

**Հ/բ-0315 Հոգեբանական ծառայությունը կրթության
բնագավառում - 5 կրեդիտ**

**Դասախոսություն –32 ժամ, սեմինար - 32 ժամ, (շաբաթական 4
ժամ) 8-րդ կիսամյակ, քննություն**

Նպատակը.

- Հոգեկան և հոգեբանական առողջության պահպանման պայմանների, դպրոցականների հետ հոգեբանական աշխատանքի առանձնահատկությունների, հոգեբանական ներգործության մեխանիզմների, լիարժեք հոգեկան զարգացման հնարավորությունների, երեխայի անձի և անհատական հոգեբանական առանձնահատկությունների անվերապահ ընդունման կարևորության մասին գիտելիքների ձեռք բերում:
- Հոգեբանական աշխատանքի տեսական և մեթոդոլոգիական հենքի յուրացում:
- Գիտական աշխարհայացքի ձևավորում, հոգեբանական մշակույթի բարձրացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

կիմանա.

- ծառայության տեսական հիմքերը, տիրապետի տեխնիկաներին,
- ծառայության աշխատանքի սկզբունքները,
- գործնական հոգեշտկման հիմնական մեթոդները,
- կրթական ոլորտի սուբյեկտների հետ աշխատանքի ձևերը,

- զարգացնող և հոգեշտկողական ծրագրերի կազմման առանձնահատկությունները:

Կկարողանա.

- մշակել կանխարգելիչ, զարգացնող, հոգեշտկողական ծրագրեր ելնելով ծրագրերի կազմման հիմնական պահանջներից, սկզբունքներից՝ հաշվի առնելով սովորողների պրոբլեմները,
- կիրառել հիմնական մեթոդները, պրակտիկ հոգեշտկման ձևերը հոգեբանի գործունեության ընթացքում:

Բովանդակությունը

Թեմա 1. Կրթության հոգեբանական ծառայության ծագումը, զարգացումը և ներկա վիճակը Կրթության հոգեբանական ծառայությունը կամ դպրոցական հոգեբանությունը արտասահմանում: Կրթության հոգեբանական ծառայությունը ԽՍՀՄ-ում և Հայաստանում: **Թեմա 2. Կրթության հոգեբանական ծառայության առարկան և խնդիրները** Կրթության հոգեբանական ծառայության բնորոշումը: Կրթության հոգեբանական ծառայության տեսական հիմքերը: Կրթության հոգեբանական ծառայության նպատակները: Կրթության հոգեբանական ծառայության խնդիրները: Հոգեբանական ծառայության գործունեության արդի և հեռանկարային ուղիները: Ծառայության կառուցվածքը: **Թեմա 3. Կրթության ոլորտի գործնական հոգեբանը որպես մասնագետ** Հոգեբանի մասնագիտական տեղն ուսումնական հաստատությունում: Կրթության հոգեբանը որպես ենթակա և որպես գործընկեր: Հոգեբանի աշխատանքի սկիզբն ուսումնական հաստատությունում: Հոգեբանի աշխատանքի բովանդակությունը: Հոգեբանի աշխատանքի առանձնահատկությունը կախված ուսումնական հաստատության տիպից: **Թեմա 4. Կրթության ոլորտի գործնական հոգեբանի գործունեության հիմնական տեսակները** Հոգեբանական լուսավորում: Հոգեբանական կանխարգելում(պրոֆիլակտիկա): Հոգեբանամանկավարժական խորհրդակցություն(կոնսիլիում): Հոգեբանական խորհրդատվություն: Հոգեբանական ավտորոշում: Հոգեբանի աշխատանքի տարբեր տեսակների տևողության կողմնորոշիչ նորմերը: Հոգեբանի սենյակը ուսումնական հաստատությունում: **Թեմա**

5. Կրթության ոլորտի գործնական հոգեբանի գործունեության սկզբունքները

Մարդու անհատականության հասկացումը որպես արժեք: Հոգեբանի մասնագիտական փոխհամագործակցությունը կրթական ոլորտի սուբյեկտների հետ:

Թեմա 6. Գործնական հոգեբանը որպես մասնագետ և որպես անձ Հոգեբանի մասնագիտական դիրքը: Հոգեբանի մտածողությունը: Պրակտիկ հոգեբանի անձնային առանձնահատկությունները: Կրթության ոլորտի հոգեբանի իրավունքներն ու պարտականությունները: **Թեմա 7. Հոգեբանի աշխատանքի հիմնական ուղղությունները նախադպրոցական տարիքի երեխաների հետ**

Տարիքի հիմնական բնութագիրը: Հոգեկան զարգացման առանձնահատկությունները: Նախադպրոցական մանկության արժեքը: Նախադպրոցականների սոցիալիզացիայի խնդիրները: Ուսուցման ու զարգացման պրոբլեմը նախադպրոցականների հետ աշխատանքում: Ջարգացնող աշխատանքը մինչնախադպրոցական տարիքի երեխաների հետ (2-3 տարեկան): Ջարգացնող աշխատանքը կրտսեր և միջին նախադպրոցական տարիքի երեխաների հետ (3-5 տարեկան): Ջարգացնող աշխատանքը ավագ նախադպրոցականների հետ: «Ռիսկի խմբի» նախադպրոցականներ: Ջարգացման հիմնական դժվարությունների բնութագիրը: Վարքի խանգարումներ: Հոգեկան զարգացման հապաղումներ: **Թեմա 8. Հոգեբանի աշխատանքը դպրոցական պատրաստվածության ձևավորման գործում**

Հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին: «Դպրոցին հոգեբանական պատրաստվածություն» հասկացությունը: Դպրոցական պատրաստվածության որոշման մեթոդների վերլուծություն: Դպրոցին հոգեբանական պատրաստվածության փստորոշման ծրագիրը: Ախտորոշիչ ծրագրի մշակման տեսական հիմքերը: Ախտորոշիչ ծրագրի բաղադրամասերը: Դպրոցին հոգեբանական պատրաստվածության որոշման ընթացակարգը: Ջարգացնող և շտկողական աշխատանքը: Կորեկցիոն աշխատանքը: Ջարգացնող աշխատանքը: **Թեմա 9. Հոգեբանի աշխատանքի առանձնահատկությունները կրտսեր դպրոցականների հետ**

Տարիքի ընդհանուր բնութագիրը: Հոգեկան զարգացման առանձնահատկությունները: Կրտսեր դպրոցական տարիքի արժեքը: Ուսումնական գործունեությունը և սովորելու կարողությունը: Ճանաչողական գործընթացների զարգացմանն ուղղված աշխատանքները: Ուշադրության զարգացումը: Հիշողության զարգացումը: Մտավոր զարգացումը: Մտորիկայի զարգացմանն ուղղված

աշխատանքը: Սեփական վարքի տիրապետելուն ուղղված օգնությունը: Կրտսեր դպրոցականի փոխհարաբերությունները մեծահասակների և հասակակիցների հետ: «Ռիսկի խմբի» կրտսեր դպրոցականները: Ետ մնալը կրտսեր դասարաններում: Ուշադրության դեֆիցիտի ախտանիշով երեխաներ(հիպերակտիվներ): Դանդաղկոտ երեխաներ: Ցուցադրական երեխաներ: Տագնապային երեխաներ: Չախլիկ երեխաները դպրոցում: **Թեմա 10. Դպրոցական հոգեբանի աշխատանքը դեռահասների հետ** Տարիքի ընդհանուր բնութագիրը: Հոգեկան զարգացման առանձնահատկությունները: Դեռահասության ճգնաժամի պրոբլեմը: Դեռահասության արժեքը: Հոգեբանի աշխատանքի հիմնական ուղղությունները վաղ դեռահասության տարիքի երեխաների հետ: Ջարգացման խնդիրները: Ուսուցման սկիզբը միջին դասարաններում: Սովորելու կարողության ձևավորումը միջին դպրոցում: Հոգեբանական օգնությունը ուսումնական գործունեության դժվարությունների դեպքում: Հոգեբանի աշխատանքի հիմնական ուղղությունները միջին դեռահասության տարիքի երեխաների հետ: Ջարգացման խնդիրները: Մեծահասակության զգացման զարգացումն ու ամրապնդումը: Իր նկատմամբ հետաքրքրության ձևավորումը: Ինքնագնահատականի, սեփական արժանապատվության զգացման զարգացումը: Ուսումնական մոտիվացիայի զարգացումը և կրթության դիֆերենցիացիայի պրոբլեմը: Հետաքրքրությունների զարգացումը: Հոգեբանի աշխատանքի հիմնական ուղղությունները ավագ դեռահասության տարիքի երեխաների հետ: Ջարգացման խնդիրները: հասակակիցների հետ հաղորդակցման զարգացումը: Կամքի զարգացումը: Մոտիվացիոն ոլորտի զարգացումը: Հուզական վիճակների կարգավորման հնարների տիրապետումը: Երևակայության զարգացումը: Դեռահասության՝ որպես զարգացման պուլսերտատային շրջանի հոգեբանական պրոբլեմները: Օրգանիզմի հասունացումը: Ֆունկցիոնալ հնարավորությունները և վիճակը: Մոտորային և խոսքային ոլորտների զարգացումը: Արտաքինի ինքնագնահատականը, «ֆիզիկական ես-ը»: Սեռական զարգացումը: «Ռիսկի խմբի» դեռահասները: Հոգեկան հիվանդությունների դեյուտները դեռահասների մոտ: Բնավորության շեշտադրումներով և պսիխոպատիաներով դեռահասներ: Անձի ներտիկ զարգացումը դեռահասների մոտ: Հոգեմետ նյութերի օգտագործումը և քիմիական կախվածությունը դեռահասների

մոտ: Ցերեբրաասթենիկ երևույթներով դեռահասներ: Դեռահասների սուլիցիդալ վարքը: Դիսֆունկցիոնալ ընտանիքների դեռահասներ: Սեռական զարգացման հետ կապված պրոբլեմներ: **Թեմա 11. Դպրոցական հոգեբանի աշխատանքը վաղ տարիքի պատանիների հետ** Տարիքի ընդհանուր բնութագիրը: Հոգեկան զարգացման առանձնահատկությունները: վաղ պատանեկության արժեքը և զարգացման խնդիրները: Անձնային զարգացման պրոբլեմները վաղ պատանեկության տարիքի տարբեր փուլերում: Ուսուցման ձևի և կյանքի կերպի ընտրությունը պատանեկության տարիքում: Սոցիալ-հոգեբանական ադապտացիան նոր խմբում: Մարատորիումի երկարաձգման դիրքորոշումը: Ապագայի ժամանակային հեռանկարը և մասնագիտական ինքնորոշումը: Դեպի ապագա ուղղվածությունը որպես վաղ պատանեկության կյանքի աֆեկտիվ կենտրոն: Կենսական նպատակները և հոգեբանական առողջությունը: «Ռիսկի խմբի» պատանիներն ու աղջիկները: Հասունացման հնարավոր տարբերակները: Ադդիկտիվ վարքը: Պատանեկան սեքսուալությունը: Ասոցիալ վարքը: **Թեմա 12. Հոգեբանության դասավանդումը դպրոցում** Հոգեբանությունը որպես հանրակրթական դպրոցի ուսումնական առարկա: Հոգեբանության դասավանդման ակտուալությունը ժամանակակից դպրոցում: Հոգեբանության ներմուծման փուլերը դպրոցական կրթության պրակտիկայում: Հոգեբանության դասավանդման նպատակահարմարությունը: «Հոգեբանությունը դպրոցում» դասընթացի գիտական բովանդակության հիմնավորումը: Երբ սկսել հոգեբանության դասավանդումը դպրոցում: Հոգեբանության դասավանդման հոգեբանա-դիդակտիկ ասպեկտները դպրոցում: Հոգեբանության դասավանդման սկզբունքները: Հոգեբանության դասը: Ուսուցչի նախապատրաստվելը դասին: Դասը և ուսումնական իրադրությունները: Դասը և դպրոցականների հուզական վիճակը: Աշակերտը որպես ուսումնական գործունեության սուբյեկտ: Ուսուցիչը որպես մանկավարժական գործունեության սուբյեկտ: Ուսուցչի և աշակերտի փոխգործունեությունը: Գնահատականը և թվանշանը:

Հ/բ-1169 Հոգեգենետիկայի հիմունքներ – 4 կրեդիտ

Դասախոսություն – 28 ժամ, սեմինար – 28 ժամ (շաբաթական 3 ժամ)

8-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Պատրաստել այնպիսի մասնագետներ, ովքեր կկարողանան անցկացնել հոգեգեներտիկական հետազոտություններ, մեկնաբանել դրանց արդյունքները, ինչպես նաև կիրառել անհատական տարբերությունների ծագման վերաբերյալ գիտելիքները մասնագիտական գործունեության մեջ: Դասընթացի նպատակն է նաև ծանոթացնել ուսանողներին ժամանակակից գեներտիկայի հիմնական դրույթներին, գիտելիքներ տալ հոգեգեներտիկայի մեթոդների և մեթոդոլոգիայի վերաբերյալ, հետազոտությունների հիմնական արդյունքների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա բացահայտել ժամանակակից հոգեգեներտիկայի կառուցվածքը, հիմնական բաժինները, կատեգորիաները, մեթոդները, հոգեբանի հետազոտական և պրակտիկ գործունեության հիմնական բովանդակությունը, նաև գենոտիպորեն ախտորոշել գեներտիկական պաթոլոգիաները;
- կկարողանա կազմել տոհմաճառ, կողմնորոշվել գեներտիկական հոգեֆիզիոլոգիայի, վարքի գեներտիկայի և փորձարարական հոգեգեներտիկայի դպրոցների արտասահմանյան և հայրենական հետազոտություններում;
- ժամանակակից դիֆերենցիալ հոգեբանության և գեներտիկայի հիմնական դրույթներին, որոնք անհրաժեշտ են հոգեբանական տվյալների մասնագիտական հասկացման համար;
- կտիրապետի ժառանգականության և փոփոխականության հիմքերին, ժառանգման օրինաչափություններին, փոփոխականության տեսակներին ու պատճառներին, անհատի հոգեֆիզիոլոգիական և հոգեբանական բնութագրումների ժառանգման կանոններին;

Դասընթացի ծրագիր

Ձեռնարկ 1. Ժամանակակից դիֆերենցիալ հոգեբանության և գենետիկայի հիմնական դրույթները: **Ձեռնարկ 2.** Ժառանգականության տեսության հիմնական հասկացությունները: **Ձեռնարկ 3.** Հոգեգենետիկայի մեթոդները: **Ձեռնարկ 4.** Գենետիկական հետազոտությունների փորձարարական սխեման: **Ձեռնարկ 5.** Գենոտիպի և միջավայրի դերը հոգեբանական հատկանիշների փոփոխականության մեջ: **Ձեռնարկ 6.** Հոգեախտաբանության հոգեգենետիկական ուսումնասիրումը:

Հ/մ-0364 Հասուն տարիքի և տարեցների հոգեբանություն –4 կրեդիտ

Դասախոսություն –28 ժամ, գործնական - 28 ժամ, (շաբաթական 3 ժամ) 8-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողներին զինել գիտելիքներով, որոնց օգնությամբ նրանք կկարողանան հասուն տարիքի և տարեցների հոգեբանության հիմնահարցերին և առաջացած խնդիրներին տալ մասնագիտական ,հոգեբանական լուծումներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կտիրապետի տարիքային հոգեբանության հետազոտության մեթոդներին,
- կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը

Ձեռնարկ 1 Հասուն տարիքի հոգեբանություն» առարկան, խնդիրները, մեթոդները: **Ձեռնարկ 2** Ֆիզիկական զարգացումը հասունության տարիքում: **Ձեռնարկ 3** Կոգնիտիվ զարգացումը հասունության տարիքում: **Ձեռնարկ 4** Հոգեբանական զարգացումը վաղ հասունության տարիքում: **Ձեռնարկ 5** Ծնող լինելու կարևորությունը տարիքի ձևավորման գործում: **Ձեռնարկ 6** Միջին հասունության տարիք: **Ձեռնարկ 7** Ուշ հասունության տարիք: **Ձեռնարկ 8** Մահվան հոգեբանություն

Հ/մ-0366 Արտակարգ իրավիճակների հոգեբանություն - 5 կրեդիտ

Դասախոսություն - 32 ժամ, սեմինար - 32 ժամ

8-րդ կիսամյակ , քննություն

Նպատակը.

Տալ պրակտիկ գիտելիքներ հոգեբան-մանկավարժի որակավորում ստացող ուսանողներին, ծանոթացնել հոգեբանամանկավարժական սկզբունքներին, ձևերին, փուլերին, ուղղություններին, տարբեր տարիքային փուլերի հետ աշխատանքի առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- Պետք է ունենա ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում անհատական և խմբային գործողությունների կազմակերպման և կառավարման հիմնարար հոգեբանական գիտելիքներ:
- Գոյատևման համար անբարենպաստ պայմաններում հոգեբանական հարմարման առանձնահատկություններ և դրանց ապահովման ձևեր:
- Հոգեկան հուսալիության ապահովման արդյունավետ մեթոդների ընտրություն, մշակում և կիրառում:

Դասընթացի բովանդակությունը

Թեմա 1` Արտակարգ իրավիճակների հոգեբանության առարկան, խնդիրները, նպատակը, մեթոդները **Թեմա 2`** Արտակարգ իրավիճակների բնութագրերի դասակարգումը: **Թեմա 3`** Տեղեկատվական հոգեբանության ազդեցությունը: **Թեմա 4`** Արտակարգ պայմաններում աշխատանքի հոգեբանություն: **Թեմա 5`** Արտակարգ իրավիճակներում ազգաբնակչության կենսագործունեության պահպանման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 6`** Անձի հոգեկան կայունության բաղադրամասերը: **Թեմա 7`** Հոգեբանական կայունության գործոնները: **Թեմա 8`** Հավատը, որպես հոգեկան կայունության հիմք: **Թեմա 9** Կամային ինքնակարգավորում: **Թեմա 10`** Արտակարգ պայմաններում անձի հուզական ոլորտի հետազոտման մեթոդներ

Յ/բ-1149 Ընտանիքի սոցիոլոգիա –5 կրեդիտ

Ռասախոսություն –32 ժամ, սեմինար - 32 ժամ,

8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել ընտանիքի պատմական փոփոխության, իբրև սոցիալական խումբ և ինստիտուտ՝ սոցիոլոգիական երկակի մոտեցման և հետազոտման առանձնահատկությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

ԳԻՏԵՆԱ՝

Ընտանիքի դերը հասարակության գործառնության սահմաններում՝ այլ ինստիտուտների հետ փոխկախվածության տեսանկյունից:

ԿԱՐՈՂԱՆԱ՝

Կազմակերպել ընտանիքի ուսումնասիրմանն ուղղված սոցիոլոգիական հետազոտություն:

ՏԻՐԱՊԵՏԻ՝

Ընտանիքի հետազոտման հիմնական մեթոդներին, գործիքների մշակման ձևերին, վերլուծության հիմնական եղանակներին:

Բովանդակությունը

Թեմա 1.Ընտանիքի սոցիոլոգիայի էությունը:Ընտանիքը որպես սոցիոլոգիայի ուսումնասիրման օբյեկտ: Ընտանիքը ուսումնասիրող գիտությունները և դրանց կապը սոցիոլոգիայի հետ:

Թեմա 2. Ընտանիքն ուսումնասիրող տեսական մոտեցումներ: Ընտանիքի քննությունը տեսության շրջանակներում: Ընտանիքի քննությունը փոխառնական, տպավորությունների կառավարման տեսության շրջանակներում: Ընտանիքի քննությունը սիմվոլիկ ինտերակցիոնիզմի շրջանակներում: Ընտանիքի քննությունը

էթնոմէթոդաբանութեան շրջանակներում: Ընտանիքի քննությունը Վալերշտայնի սոցիոլոգիական հայացքներում:

Թեմա 3. Ընտանիքն իբրև սոցիալական խումբ և ինստիտուտ: Ընտանիքը որպես սոցիալական խումբ: Ընտանիքը որպես սոցիալական ինստիտուտ: Ընտանիքի կապն այլ սոցիալական ինստիտուտների հետ: Ընտանիք և տնտեսություն: Ընտանիք և մշակույթ: Ընտանիքը որպես մշակութային ստանդարտների փոխանցման կարևոր օղակ: Ընտանիք և կրոն: Ընտանիք և կրթություն: Ընտանիք և քաղաքականություն: Հասարակության քաղաքա-տնտեսական հիմքերի ուղղակի և անուղղակի ազդեցությունը ընտանիքի վրա: Ընտանիքի ֆունկցիաները: Ընտանիքի սպեցիֆիկ ֆունկցիաները: Ընտանիքի ոչ սպեցիֆիկ ֆունկցիաները: Ընտանիքի ֆունկցիաների փոփոխությունը պատմության ընթացքում:

Թեմա 4. Ընտանիքի տիպաբանությունը: Ընտանիքի պատմական զարգացումը: Ավանդական և ժամանակակից ընտանիքների նմանություններն ու տարբերությունները: Ավանդական ընտանիք. առանձնահատկությունները: Նուկլեար ընտանիք. առանձնահատկությունները: Ընտանիքի տիպաբանությունը ըստ իշխանության բաշխման հիմքի: Երկկարիեռային ընտանիք. առանձնահատկությունները: Ընտանիքատիպ միավորումներ:

Թեմա 5. Ընտանեկան կոնֆլիկտներ: Ընտանիք և սոցիալական միջավայր: Ընտանիք և երեխա: Կին և ընտանիք: Ընտանիք և սոցիալական միջավայր: Ընտանեկան կոնֆլիկտների յուրահատկությունը: Միջսերնդային կոնֆլիկտներ ընտանիքում: Ներսերնդային կոնֆլիկտներ ընտանիքում: Ընտանեկան ենթամշակույթ:

Թեմա 6. Ընտանիքի սոցիոլոգիական հետազոտման առանձնահատկությունները: Ընտանիքի հետազոտման մեթոդական և մեթոդաբանական հիմքերը: Կյանքի պատմությունների մեթոդի կիրառելիությունը ընտանիքի հետազոտման ընթացքում: Խորին հարցազրույցի և հարցաթերթիկային հարցման կիրառելիությունը ընտանիքի հետազոտման ընթացքում: Ընտանիքի հետազոտման դժվարությունները

**Յ/բ-1170 Անձնային խանգարումների հոգեբանություն – 4 կրեդիտ
Դասախոսություն – 28 ժամ, սեմինար – 28 ժամ (շաբաթական 3 ժամ) 8-րդ
կիսամյակ, ստուգարք**

Նպատակը.

Ծանոթացնել ուսանողներին բարձրագույն հոգեկան գործընթացների խանգարումների հիմնական ֆենոմեններին, ձևավորել պատկերացումներ անձնային խանգարումների կառուցվածքի, դինամիկայի, հոգեբանական ախտորոշման և հոգեթերապիայի մոդելների, ինչպես նաև տեսական հիմքերի և մեթոդոլոգիայի վերաբերյալ: Տալ գաղափար անձնային խանգարումների պատճառային գործոնների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.

- կիրառել հոգեկան խախտումների ախտորոշման մեթոդիկաները;
- աշխատել կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ՝ ստացված ախտորոշման տվյալների հիման վրա;
- մեկնաբանել ստացված տվյալները՝ դրված խնդրին համապատասխան;
- իրականացնել խորհրդատվական, հոգեշտկողական աշխատանք զարգացման խախտումներով երեխաների և դեռահասների հետ;
- ցուցաբերել հոգեբանական օգնություն անձնային խախտումներով երեխաների և դեռահասների ընտանիքներին:

Բովանդակություն

Թեմա 1. Անձնային խանգարումների պրոբլեմը: **Թեմա 2.** Անձնային խանգարումների բացահայտման չափանիշները: **Թեմա 3.** Անձնային խանգարումների պատճառային գործոնները: **Թեմա 4.** Անձնային խանգարումների բժշկական և հոգեբանական մոդելները: **Թեմա 5.** Անձնային խանգարումների ախտորոշման մեթոդներ: **Թեմա 6.** Անձնային խանգարումների ախտորոշման և բուժման խնդիրները:

Յ/մ-1137 Յոգեշտկում – 4 կրեդիտ

**Դասախոսություն –28 ժամ, սեմինար - 28 ժամ, (շաբաթական 6
ժամ) 8-րդ կիսամյակ, ստուգարք**

Նպատակը.

- Շտկողական աշխատանքի հիմնական տեխնիկաները, ձևերը կիրառելու կարողության ձևավորում, շտկողական ծրագրերի մշակման ժամանակ հոգեշտկման սկզբունքների և յուրահատկության հաշվի առնում:
- Հոգեշտկողական աշխատանքի տեսական և մեթոդոլոգիական հենքի յուրացում:
- Գիտական աշխարհայացքի ձևավորում, հոգեբանական մշակույթի բարձրացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

կիմանա.

- հոգեշտկման հիմնական տեսական ուղղությունները և տեխնիկաները,
- հոգեշտկողական աշխատանքի սկզբունքները,
- գործնական հոգեշտկման հիմնական մեթոդները,
- հոգեշտկման ձևերը,
- հոգեշտկողական ծրագրերի կազմման առանձնահատկությունները:

կկարողանա.

- մշակել հոգեշտկողական ծրագիր ելնելով ծրագրերի կազմման հիմնական պահանջներից, հոգեշտկման սկզբունքներից՝ հաշվի առնելով սովորողների պրոբլեմները,
- կիրառել հիմնական մեթոդները, պրակտիկ հոգեշտկման ձևերը հոգեբանի գործունեության ընթացքում:

Բովանդակությունը

Թեմա 1. Հոգեբանամանկավարժական կորեկցիան որպես գործնական հոգեբանության բնագավառ: Գաղափար հոգեբանական խնդրի և հոգեբանական օգնության մասին: Հոգեբանամանկավարժական կորեկցիայի նպատակը,

խնդիրները, բաղադրամասերը: Հոգեբանամանկավարժական կորեկցիայի ձևերն ու սկզբունքները: Հոգեբանամանկավարժական կորեկցիայի հիմնական տեխնիկաները: Հոգեախտորոշման կիրառումը հոգեբանամանկավարժական շտկման ընթացքում: Հոգեշտկող միջոցառումներ իրականացնող հոգեբանին ներկայացվող հիմնական պահանջները: Կորեկցիոն ծրագրերի կազմման առանձնահատկությունները: **Թեմա 2. Հոգեբանամանկավարժական կորեկցիայի հիմնական ուղղությունները: Վարքաբանական ուղղությունը:** Վարքաբանական հոգեշտկման հիմունքները: Վարքաբանական շտկման մեթոդներն ու տեխնիկաները: **Թեմա 3. Կորեկցիայի հոգեդինամիկ ուղղությունները:** Գաղափար հոգեվերլուծության մասին: Ջ.Ֆրոյդի դասական հոգեվերլուծությունը: Ա.Ադլերի անհատական վերլուծական կարգավորումը: Ռ.Ասաջուլի հոգեսինթեզը: Սիմվոլիզմը: **Թեմա 4. Հոգեշտկման կոգնիտիվ ուղղությունները:** Ա.Էլիսի ռացիոնալ-էմոտիվ թերապիան: Ա.Բեկի հոգեշտկման համակարգը: Ջ.Կելլի: Անձնային կառույցների տեսությունը և սևեռված դերի թերապիան: Ու.Գլասերի իրատեսական թերապիան: **Թեմա 5. Հոգեշտկման էքզիստենցիալ-հումանիստական ուղղությունները:** Կ.Ռոջերսի հոգեշտկման համակարգը: Վ.Ֆրանկլի լոգոթերապիան: Արժեքահարմարվողական մոտեցումներ: **Թեմա 6. Է.Բեռնի տրանսակտային վերլուծությունը: Թեմա 7. Ֆ.Պերլզի գեշտալտթերապիան: Թեմա 8. Գործնական հոգեշտկման մեթոդները: Խաղային թերապիա:** Մեթոդի ընդհանուր բնութագիրը: Խաղային թերապիայի հիմնական տեսակներն ու ձևերը: Խաղասենյակը և նրա կահավորումը: Հոգեբան-խաղաթերապևտին ներկայացվող պահանջները: **Թեմա 9. Արտթերապիա:** 1. Մեթոդի ընդհանուր բնութագիրը: Երաժշտական թերապիա: Բիբլիոթերապիա: Պարային թերապիա: Պրոյեկտիվ նկար: Պատմվածքների հորինում: Հեքիաթաթերապիա: Տիկնիկային թերապիա: **Թեմա 10. Հոգեգիմնաստիկա: Թեմա 11. Վարքաբանական կորեկցիայի մեթոդներ:** Սիստեմատիկ դեսենսիբիլիզացիայի և սենսիբիլիզացիայի մեթոդ: Իմերսիոն մեթոդներ: Կենսաբանական հակադարձ կապի սկզբունքի վրա հիմնված մեթոդներ: «ժետոնային» մեթոդ: Մորիտի մեթոդ: Հոլդինգ: Իմագո-մեթոդ: **Թեմա 12. Հոգեդրամա:** Մեթոդի նկարագրությունը: Հոգեդրամայի ձևերն ու տեսակները: Հոգեդրամայի մեթոդիկաները: **Թեմա 13. Անհատական և խմբային կորեկցիա: Անհատական հոգեշտկում:** Անհատական հոգեշտկման ցուցումներ: Անհատական հոգեշտկման հոգեբանական առանձնահատկությունները:

Թեմա 14. Խմբային հոգեշտկում: Հոգեշտկման խմբային ձևի յուրահատկությունը: Խմբի կազմավորման առանձնահատկությունները: Խմբային դինամիկա: Հոգեշտկողական խմբի ղեկավարումը: **Թեմա 15. Կորեկցիոն խմբերի տեսակները:** **Թեմա 16. Խմբային քննարկումը որպես խմբային աշխատանքի մեթոդ:** **Թեմա 17. Ընտանեկան հարաբերությունների հոգեշտկում:** Ընտանեկան հարաբերությունների հոգեշտկում: Ընտանիքը որպես հոգեշտկողական ներգործության օբյեկտ: Երեխա-ծնող փոխհարաբերությունների և ընտանեկան հարաբերությունների շտկման մեթոդիկաները:

Հ/բ-1171 Սոցիալական փոխներգործության և իմիջի հոգեբանություն–6 կրեդիտ
Դասախոսություն –48 ժամ, սեմինար – 44 ժամ, (շաբաթական 5ժամ)

8-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սոցիալական փոխներգործության հոգեբանական առանձնահատկություններին, քննարկել ներազդման հոգեբանական մեխանիզմները և տեսությունները, ներկայացնել իմիջի հոգեբանության առարկան, խնդիրները, քննարկել իմիջի, որպես հոգեբանական երևույթի էությունը, դրա ձևավորման գործընթացի յուրահատկությունները, ինչպես նաև այն գործոնների համալիրը, որը ազդում է իմիջի ստեղծման վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթաց ի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա սոցիալական փոխներգործության հոգեբանական օրինաչափությունները և իմիջի օգտագործման հոգեբանական մեխանիզմները,
- կժանոթանան երազումները իմականակայելու նուղղված հոգեբանական հնարներին, խմբային և էթնիկական իմիջի գործառնման յուրահատկություններին,
- կկարողանա վերլուծել քաղաքական իմիջի ու դրա գործելակերպի օրինաչափությունները:

Բովանդակությունը

Թեմա 1. Սոցիալական փոխներգործության հոգեբանության առարկան և նրա տեղը գիտությունների կառուցվածքում: **Թեմա 2.** Սոցիալական փոխներգործության էությունը և տեսակները: **Թեմա 3.** Հաղորդակցումը՝ որպես սոցիալական փոխներգործության ձև: **Թեմա 4.** Հաղորդակցման երեք կողմերը: Հաղորդակցմանն եղմասնագիտական ասպեկտները: **Թեմա 5.** Ներագույնը որպես սոցիալական փոխներգործության ձև: **Թեմա 6.** Իմիջի հոգեբանության ուսումնասիրության տեսական մոտեցումների վերլուծություն: **Թեմա 7.** Իմիջի դասակարգումը, կառուցվածքը և նրա ձևավորման գործընթացը: **Թեմա 8.** Իմիջի գործառնության միջավայրը: **Թեմա 9.** Անհատական իմիջի հոգեբանություն: **Թեմա 10.** Կորպորատիվ իմիջի հոգեբանություն: **Թեմա 11.** Իմիջի տեսակները:

**Հ/մ-0361 խոսքի հոգեբանություն և հոգելեզվաբանություն - 6 կրեդիտ
Ռասախոսություն - 48 ժամ, գործնական - 44 ժամ, (շաբաթական 3 ժամ)**

8-րդ կիսամյակ, ստուգաթղթ

Նպատակը.

Ուսանողներին զինել գիտելիքներով, որոնց օգնությամբ նրանք կկարողանան տիրապետել խոսքի հոգեբանության և հոգելեզվաբանության հիմնահարցերին և առաջացած խնդիրներին տալ մասնագիտական , հոգեբանական լուծումներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կտիրապետի խոսքի հոգեբանության և հոգելեզվաբանության հետազոտության մեթոդներին,
- կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Առարկան, խնդիրները, մեթոդները, կառուցվածքը: **Թեմա 2.** Առարկայի տեսական հիմքերը (պատմական ակնարկ): **Թեմա 3.** Հոգելեզվաբանության

ուսումնասիրման հիմնական մեթոդներ: **Թեմա 4.** Խոսքի ֆիզիոլոգիական մեխանիզմները: **Թեմա 5.** Ռեֆլեքսիվ հոգելեզվաբանություն: **Թեմա 6.** Ջարգացման հոգելեզվաբանություն: **Թեմա 7.** Էթնոհոգելեզվաբանություն: **Թեմա 8.** Օտար լեզվի յուրացման հոգելեզվաբանություն: **Թեմա 9.** Երկլեզվության հիմնախնդիրը: **Թեմա 10.** Խոսքային խանգարումների հոգելեզվաբանություն:

V Այլ բաղադրիչներ

1. Կուրսային աշխատանք (3+3=6 կրեդիտ),5-րդ, 6-րդ կիսամյակ

2. Ուսումնական պրակտիկա(3+3=6 կրեդիտ),4-րդ, 6-րդ կիսամյակ, ստուգարք

Պրակտիկայի նպատակը

- Ուսանողին հստակ պատկերացում տալ այն հոգեբանական հմտությունների կիրառման մասին, որոնք կիրառվում են խոցելի խմբերի հետ աշխատանքի գործընթացում:
- Ծանոթացնել խոցելի խմբերի հետ աշխատանքի հոգեբանամանկավարժական առանձնահատկություններին:
- Ծանոթացնել տարբեր խոցելի խմբերի հետ աշխատանքների սոցիալ-հոգեբանական, մանկավարժական առանձնահատկություններին:
- Ուսանողներին ծանոթացնել հոգեբանական գիտելիքների կիրառման առանձնահատկություններին:

Պրակտիկայի խնդիրները

- Նպաստել ուսանողների տեսական գիտելիքների կիրառումը պրակտիկայում,
- Նպաստել ուսանողների հոգեբանամանկավարժական մակարդակի բարձրացմանը:
- Նպատակային և արդյունավետ դարձնել ուսանողների աշխատանքը խոցելի խմբերի զարգացման օրինաչափությունների ձևավորման գործում:
- Ուսանողներին հաղորդակից դարձնել հոգեբանական, մանկավարժական գիտության նվաճումներին, օգնել ճիշտ կողմնորոշվելու խոցելի խմբերի դաստիարակության և ուսուցման տեսության և պրակտիկայի հարցերում:

Պրակտիկայի բովանդակությունը

Ուսանողը ծանոթանում է հատուկ հաստատության հետ, նրա տնօրենի, հոգեբանի և դաստիարակների հետ: Ուսումնասիրում է այն խումբը, որտեղ ուսանողը անցնելու է իր պրակտիկան, ծանոթանում է դաստիարակների աշխատանքի հետ: Ուսումնասիրում է խոցելի խմբերի անհատական առանձնահատկությունները և տալիս է խմբի հոգեբանամանկավարժական և սոցիալ-հոգեբանական վերլուծությունը: Ընթացքում վարում է նաև անհատական հոգեախտորոշիչ և

հոգեշտկողական աշխատանքներ: Մասնակցում է հատուկ հաստատությունում անցկացվող միջոցառումներին, տարբեր տեսակի պարապմունքներին: Ջարգացնում է խոցելի խմբերի երեխաների մոտ տարբեր տեսակի ընդունակություններ և հմտություններ, օգնում է դասապատրաստման գործընթացում: Հատուկ հաստատության հոգեբանի օգնությամբ ծանոթանում են տվյալ հաստատության հոգեբանամանկավարժական և սոցիալհոգեբանական առանձնահատկություններին:

Արտադրական (մանկավարժական) պրակտիկա (6+6=12 կրեդիտ), 7-րդ, 8-րդ կիսամյակ, քննություն

Պրակտիկայի նպատակը

- Ուսանողին հստակ պատկերացում տալ այն հոգեբանական կոմպետենցիաների մասին, որոնք կիրառվում են տարբեր տարիքային խմբերի հետ աշխատանքի ընթացքում:
- Ծանոթացնել հոգեբանական հետազոտական աշխատանքի առանձնահատկություններին:
- Ծանոթացնել տարբեր տարիքային խմբերի հետ աշխատանքների սոցիալ-հոգեբանական, մանկավարժական առանձնահատկություններին:
- Ուսանողներին ծանոթացնել հոգեբանամանկավարժական գիտելիքների կիրառման առանձնահատկություններին:

Պրակտիկայի խնդիրները

- Նպաստել ուսանողների հոգեբանամանկավարժական մտահասության մակարդակի բարձրացմանը:
- Նպատակային և արդյունավետ դարձնել ուսանողների աշխատանքը հոգեկան զարգացման օրինաչափությունների ձևավորման գործում:
- Ուսանողներին հաղորդակից դարձնել հոգեբանական, մանկավարժական գիտության նվաճումներին, օգնել ճիշտ կողմնորոշվելու անհատների դաստիարակության և ուսուցման, միջանձնային հարաբերությունների, հասարակության հետ ինտեգրացիայի և հոգեբանական ակտուալություն ունեցող այլ հարցերում:
- Ուսանողների՝ ապագա մասնագետների մոտ մշակել հետազոտական, ընդհանրացման և նմանատիպ բնույթի կարողություններ ու հմտություններ:

Պրակտիկայի բովանդակությունը

- Հատուկ ծրագրով անց կացնել անձի ուսումնասիրություն՝ ֆիքսելով ուսումնասիրման տվյալները դիտումների օրագրում,
- Կազմել հետազոտվող անհատի հոգեբանամանկավարժական բնութագիր,
- Կազմել հետազոտվող խմբի հոգեբանամանկավարժական բնութագիր,
- Մեթոդիստի հետ միասին իրականացնել զարգացման իրադրության հոգեբանական վերլուծություն,
- Ինքնուրույն իրականացնել զարգացման իրադրության հոգեբանական վերլուծություն:

3.Ավարտական որակավորման քննություն (6 կրեդիտ), 8-րդ կիսամյակ